

ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻՆ

ԻՐ ԺԱՄԱՆԱԿԸ, ԸՆԿԵՐԱԿԻՑՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԵՐԸ

1. 1930 թ. Հանդէս Ամսօրեայի յունուար-ապրիլ համարներում, ինչպէս եւ Անահիտի մէջ, հրապարակ է իջած Հ.Ն. Ակինեան՝ Խորենացու Ողբի եւ Պատմութեան քննադատութեամբ աշխատելով ապացուցանել իր այն կարծիքը, թէ Խորենացին Ը. դարի անձնաւորութիւն է, թէ Ղեւոնդ պատմիչի հետ նոյն անձն է, թէ «Խորենացի» բառն իսկ, բառախաղական մեկնարանութեամբ, «ընդ խորս էանց» բառերից է ծագած:

Առաջիկայ տողերով ինձ թոյլ եմ տալիս Խորենացու մասին այն կարծիքներն արտայայտել, որ ի վաղուց հետէ (1908 թ.) իմ մէջ հաստատուած են: Կրկնութիւններից խուսափելու համար՝ մենք Ողբն ու միւս գրական գործերն առանձնակի չենք նայում Հ. Ակինեանի նման, այլ շաղկապուած Խորենացու ելեւէջների հետ, միայն թէ Ողբի վրայ երկարօրէն կանգ կ'առնենք:

2. Անտեսել մինչեւ ցարդ կատարուած քննադատութիւնները՝ հաստատուած Զ. Դարի պատմիչներից եղած փոխառութիւնների վրայ, եւ Խորենացուն դարձեալ Ե. դարի մատենագիր համարել՝ մենք չենք կարող: Խորենացին իր ժամանակի կէտից խախտուած է: Պատմական փաստերի փոխառութիւնն ու այլ պարագաներ, մեր ազգային պատմիչների — Սերէոս, Ղեւոնդ, Արծրունի, Յովհ. Կաթողիկոս, Ասողիկ եւ ուրիշներ — յականէ յանուանէ եւ կամ լռելայն արած յիշատակութիւնները՝ Խորենացուն բերում կանգնեցնում են է. դարի առաջին քառորդում, որից աւելի ուշ դնել նրան ապարդիւն ջանք է, գործադրուած ինչպէս Գ. Խալաթեանի, այսպէս եւ սրան հետեւող Հ. Ակինեանի կողմից:

3. Արդէն շատ տարիներ առաջ (1899 թ.) Ստ. Մալխասեան իր «Սերէոս ու Խորենացի»

գեղեցիկ ուսումնասիրութեան մէջ բացայայտ ցոյց տուաւ, թէ 660 թուերին պատմագրող Սերէոս եպիսկոպոսն, իր գրուածքի Բ. դպրութիւնը կազմելիս՝ օգտուել է Խորենացուց իբրեւ «հաւաստի եւ ճշմարիտ» մատենագրից, պատմիչից: Ստ. Մալխասեանի այս համոզիչ ուսումնասիրութիւնից յետոյ՝ շատ այլ ընդ այլոյ կարծիքներ արտայայտուեցան այս խնդրի շուրջը, բայց անհերքելի է մնում Մալխասեանի այն կարծիքը, թէ 660 թուականներից առաջ Խորենացին իբրեւ հաւաստի ու նշմարիտ պատմիչ կրթուած հասարակութեան յայտնի էր:

Սերէոսից յետոյ 790 թուերին Ղեւոնդ Երէց պատմիչն է գալիս, որը ո'չ Խորենացու անունն է տալիս, եւ ո'չ էլ Սերէոսինը, թէեւ վերջինիս պատմութիւնից շատ նիւթեր է քաղում: Բայց նա Խորենացուց անշափ լեզուական փոխառութիւններ անելով՝ անուղղակի ճանապարհով նրա նախնիքաց գոյութիւնն է հաստատում: Այս ոճական նմանութիւնները Գր. Խալաթեանին եւ նրան հետեւող Հ. Ակինեանին այն կարծիքին են առաջնորդել, թէ բանազուրկ Խորենացին է եւ ոչ թէ Ղեւոնդը: Մենք հակառակն ենք կարծում: Նոյն Ղեւոնդը բաղմամբ ոճական նմանութիւններ ունի նաեւ Եղիշէի հետ, եւ ինչպէս այս նմանութիւնների հիման վրայ կարելի չէ պնդել, թէ փոխառու յղիչն է եւ ո'չ թէ Ղեւոնդը, այսպէս եւ պէտք է վերաբերուել Խորենացու եւ Ղեւոնդի յարաբերութեան: Խորենացին հեղինակաւոր անձն է ճանաչուած ո'չ միայն իբրեւ պատմիչ, այլ իբրեւ ոճարան, եւ է. ու յաջորդ դարերի պատմիչները — Սերէոս, Ղեւոնդ, մանաւանդ Արծրունին, Դրասխանակերտցին ու Ասողիկը — աշխատել են Խորենացու բառերն ու դարձուածները, նրա բերած նմանութիւններն ընդօրինակելու, այս մի ան-

հակառակելի պարզ ու ակնհայտ ճշմարտություն է: Հ.Ակինեան Սորենացու Ղեկնդիրը ունեցած կախումն ապացուցանելու համար՝ ջանք խնայած չէ մի ընդարձակ բառացուցակ ներկայացնելու, բայց գէթ մի անգամ անդրադարձած չէ, որ այդ բառերի մեծագույն մասը մեր Ն. դարի ընտրելագոյն հեղինակներն եւս գործածում են, եւ դարձեալ՝ նոյն բառերը նոյն Սորենացին գործ է անում ինչպէս Պատմութեան, այսպէս նաեւ իր հնագոյն աշխատութիւններից մէկի, այն է՝ «Պիտոյից Գրքի» մէջ, որ անշուշտ Ղեկնդիրը որ եւ է կախում չունի:

Պատմիչ Թովմա Արծրունին (910) ո՛չ միայն առանձին յարգանքով է խօսում Սորենացու վրայ՝ նրա գրած Պատմութիւնից նիւթեր քաղելով, այլ և նրա կեանքի մասին մի թանկագին տեղեկութիւն եւս տալիս է, որ կուսան կարող է լինել մեզ նրա կեանքի ժամանակաշրջանն որոշելու: Մենք այլ եւս աւելորդ ենք համարում Դրասխանակերտցու, Ասողիկի եւ ուրիշների խօսքերը մէջտեղ բերելու:

4. Հաստատապէս ընդունելով այն պարագան, որ Սորենացին իր պատմութեան մէջ միշտ կանգուն է ճանաչում թագաւորութիւնը Պարսից, որոնց անշափ ատում էր («զորոց ատեմք զրանս եւ զգործս», Նրուսաղէմի առման ու խաչի գերութեան ատթիւ 614թ. մինչդեռ 651 թուին նա խաղաղ կործանուեցաւ, միւս կողմից էլ այն պարագան, որ Սորենացին բնաւ ծանոթութիւն չունի Արարացուց կատարած գործերի մասին, որոնց առաջին ելոյթը Հայաստանի մէջ 640 թուին կատարուեցաւ, թէեւ ճանաչում է նրանց իրրեւ աղդ (Աշխարհացոյց էջ 612), ապա պարզ է, որ նա 640-651 թուականներից մի քանի տարով առաջ էր ապրում. նրա կեանքի վերջին կէտը մօտաւորապէս պէտք է 635-637 թուականներին դնել: Թովմա Արծրունին Սորենացու կեանքի տեւողութեան մասին միջանկեալ նախադասութեամբ խօսելով՝ ասում է. «Արոյ ժամանակ կենացն տեւեալ ձգեալ ամս հարիւր եւ քսան, լի եւ պարարտ ծերութեամբ» (*): Արդ՝ վերոյիշեալ ենթադրական բայց հաւանական 635-637 թուականներից հա-

նելով Սորենացու կեանքի տեւողութեան 120 տարին, ստանում ենք 515-517 թուականը, երբ հաւանօրէն ծնուել է Մովսէսը՝ Սորիսոռունեաց զաւառի զիւղերից մէկում: Ապագային, 574 թուին, այս Մովսէսը Սորիսոռունեաց Մաշտոց եպիսկոպոսից յետոյ՝ Սորիսոռունեաց եպիսկոպոս դարձաւ. բայց 640 թուականին, Արարենքի ելոյթի ժամանակ, նա արդէն մեռած է, եւ նրան Գրիգոր եպիսկոպոսը փոխարինած (Ներսէս Շինողի Կանոնք): «Սորենացի» կոչումը, որ միշտ կապուած է Մովսէս անուն հետ, ծննդեան տեղի յայտարար չէ. այդ բառը շատ ալլանդակ մեկնութիւններ է ստացել — Սորօնք, Սորին Հայք, ընդ խորս էանց, եւլն. — դա կրճատումն է «Սորիսոռունեաց եպիսկոպոս» բացատրութեան, ճիշդ այնպէս, ինչպէս որ «Աւձեացեաց եպո.ր» դարձել է Անձեացի, Արշարունեաց եպո.ր, Արշարունի, եւն.: Այս փոփոխութիւնը շատ վաղ է կատարուած: Գիրք Թղթոցի մէջ պահուած դաւանաբանական թուղթը, որ 608 թուին միւս հայ եպիսկոպոսների հետ Մովսէսը նորոնտիր Աբրահամ կաթողիկոսին տուեց, հետեւեալ վերնագիրն ունի՝ «Ներանելի մեծի քերթողհօրն Մովսիսի Սորենացի եպո.ի» . այստեղ «Սորենացի եպո.ի» անսովոր բացատրութեան տակ պէտք է կարդալ «Սորիսոռունեաց եպո.ի»: Պէտք է դիտել նաեւ, որ հին ժամանակներում առանց թեմի եպիսկոպոսներ չէին ձեռնադրում եւ թեմական եպիսկոպոսները ընդհանրապէս նոյն զաւառի նախարարական տոհմերից էին լինում եւ կամ տեղացի: Սորենացի կոչման երկրորդ անգամ հանդիպում ենք 670 թուերին պատմագրող Սեբէոսի մօտ եւ այնուհետեւ Թովմասի եւ ուրիշների մօտ:

5. Սահակ Պարթեւի ու Մաշտոց վարդապետի մահուամբ հայ ազգի լուսաւորութեան գործը երբեք կանգ չառաւ, այլ ամբողջ Ն. դարի ընթացքում մինչեւ Բարդէն կաթողիկոսի 506 թուին գումարած Դուինի ժողովը, երբ հայ եկեղեցին յոյն քաղկեդոնիկ եկեղեցուց կերպապէս բաժանուեցաւ, հայ եկեղեցականներն իրենց կրթութիւնը Բիւզանդիոսի մէջ էին առնում. այնտեղ կրթուեցան ո՛չ միայն Սահակ Մաշտոցի երէց թարգմանիչները՝ Նզնիկ, Յովսէփ, Կորիւն եւ ուրիշները, այլեւ սրանց յաջորդող Գիւտ, Մանգակունի, Աղան Արծրունի, Ղազար Փարպեցի եւ այն գործիչները, որոնց անունները Ղազար Փարպեցին իր յայտնի թղթի մէջ մի առ մի յիշատակում է: Սոքա, ինչպէս ասացինք, միայն Բիւզանդիոսի մէջ

(*) Թովմա Արծրունու ազաւաղ հատուածի բաւական յաջող լուծումը կատարել է Ն. Բիւզանդացի (Կարիւն, էջ 390): Այս հատուածի «որոյ» յարաբերականի յարաբերակը միայն ու միայն հորեմացին է, այլապէս ըմբռնելը հայերէնի՝ կատարեալ տգիտութիւն է:

կրթութեան, եւ ո՛չ միայն Ս. Գրքի թարգմանութեան մասնակցեցան, այլեւ տուին հայ գրականութեան Ս. Գրքի այլ եւ այլ մասերի մեկնակալ գործերի թարգմանութիւնը եւ այնպիսի պատմական գործեր, որոնք այս կամ այն կերպ Ս. Գրքի հետ կապուած են: Այսպէս Ե. դարի թարգմանութիւններ են՝ Բարսեղ Կեսարացու՝ Վեցօրեայքը, գուցէ նաեւ Կանոնքը, Կիւրեղ Աղեքսանդրացու՝ Հին Կտակի այլ եւ այլ գրքերի մեկնութիւնները եւ «առ Նեստոր երկու թուղթք հանդերձ երկոտասան նոյովիւք» միայն, Ստեփաննի մեկնութիւնները միայն, եւ այն ճառերը՝ որոնք քրիստոնէական խոյալական կեանքն են պատկերացնում, Եւսեբիոս Կեսարացու Քրոնիկոնն ու Եկեղեցական Պատմութիւնը: Սոցա ժամանակակից Եկեղեցու միւս նշանաւոր Հայրերի գրուածները, որոնց մէջ դաւանաբանական ու այլ խնդիրներ են տրամաբանօրէն շօշափուած, մեր երէց թարգմանիչները բնաւ չեն թարգմանած:

506 թ. Դուինի ժողովը հայ եւ յոյն եկեղեցիների յարաբերութեան մէջ անջրպետ դրաւ. կազմուեցաւ քաղկեդոնական եւ հակաքաղկեդոնական եկեղեցի: Յունաց լայնածաւալ պետութեան մէջ էլ կազմակերպուած էին այդպիսի եկեղեցիներ եւ հակաքաղկեդոնականները հարուստ գրականութիւն էին մշակած եւ հայ եկեղեցուն անհրաժեշտ էր այդ գրականութեան հետ ծանօթանալ: Յունաց յարձակումների դէմ պաշտպանուելու համար: Հակաքաղկեդոնական կեդրոններից նշանաւոր էին Պաղեստինի Կեսարիան եւ մանաւանդ Եզրատոսը իր Աղեքսանդրիա քաղաքով:

534 թուին Յուստինիանոս կայսրը Բեւրաբիոսի ձեռքով Վանդալների իշխանութիւնն իսպառ խորտակեց Աֆրիկէի մէջ եւ ամբողջ Եզրատոսն իր իշխանութեան տակ առաւ, որին նրանք տիրում էին 431 թուից սկսած: Արիոսական վանդալ թագաւորների երեսից տառապող եզրատական եկեղեցականները ազատ շունչ առին, սկսան բռնոր ուժով Որոգինէսին իր հակառակորդների դէմ պաշտպանել եւ Քաղկեդոնի դէմ միարնակ վարդապետութեան հիմքերը մշակել:

Հայ Եկեղեցին, որ արդէն 506 թ. Քաղկեդոնը մերժել էր եւ մի բնութեան վարդապետութիւնն ընդունել, բնականաբար պէտք է ձգտէր Աղեքսանդրիայի հետ յարաբերութիւն ստեղծելու, ինչպէս որ նոյն ժամանակներում Ասորիներն էին կապ հաստատել:

2. դարի առաջին շրջանում հայ երկիրը քաղաքականապէս բարեյաջող պայմանների մէջ չէր. մի կողմից Պարսիկները կրօնական հալածանքներով նեղում էին հայ ժողովուրդին, միւս կողմից էլ հայ հոգի վրայ Յոյներն ու Պարսիկներն էին իրար հետ կռւում. վերջապէս վայրենի Հոյների արշաւանքը կատարուեցաւ Հայաստան, որոնք մինչեւ Սասուն ու Փոքրր Ասիա հասան: 545 թուին միայն Սոսրով Նուշիրվանի ու Յուստինիանոսի միջև երկարատեւ խաղաղութեան դաշինք կապուեցաւ՝ Յոյների կողմից առանձին հարկատուութեան պայմանով, եւ մեր երկրի համար բարեյաջող պայմաններ ստեղծուեցան: Ժամանակի կաթողիկոս Ներսէս Բագրևաւանդցին՝ օգտուելով երկրի խաղաղ վիճակից, Դուինի Բ. եւ Գ. ժողովները գումարեց 551 եւ 553 թուերին, որոնք ո՛չ միայն հայ եկեղեցու բարեկարգութեան համար կանոններ մշակելով զբաղուեցան, այլ եւ տոմարական ու դաւանաբանական խնդիրներով, եւ Բարդէն կաթողիկոսի նոյովքը նեստորականութեան ու քաղկեդոնականութեան դէմ նորոգեցին: Ահա ճիշդ այս ժամանակ որոշուեցաւ նաեւ մերձաւոր յարաբերութիւն կապել Աղեքսանդրիական եկեղեցու հետ, թէ՛ դաւանաբանական հմտութիւն ձեռք բերելու եւ թէ՛ զարթնող տոմարական խնդիրները կարգաւորելու համար՝ ուղարկելով այնտեղ Հայաստանի զանազան դաւաններից ուսումնաւարաւ, քաջուշիմ, երկարօգի երիտասարդ կրօնաւորներ: Ըստ երևութին աշակերտներ ուղարկելու գործը յանձնուեցաւ Դուինի ժողովի նշանաւոր անդամներ՝ Խորխոռունեաց Մաշտոց եւ Ռշտունեաց Սահակ եպիսկոպոսներին (որոնց իսկ գուցէ գաղափարն էր), որոնք իրենց մեծ անուանակիցների — Մեսրոպը Մաշտոցի ու Սահակ Պարթեւի — նման այդ գործը զուգն բերին: Այդ առաքումը եւ առաքման բուն նպատակը ահա ինքնին պատմում է մեզ Խորենացին՝ իր Պատմութեան Գ. Գրքի ԿԱ. գլխում՝ ասելով. «Քանզի անդէտք էին (յայնմ ժամանակի Սահակ եւ Մեսրոպը)՝ մերում արուեստի (գիտութեան), ի բաղում մասանց թերացեալ գործն գտանէր (թարգմանութիւն Ս. Գրոց), վասն որոյ տուաւ մեծին Սահակայ եւ Մեսրոպրայ զմեզ առաքեցին յԱղեքսանդրիա՝ ի լեղու պանծալի, ի ստոյգ յօղանալ ճամարանին վերձանութեան»: Դժբախտաբար՝ Խորենացու այս հատուածի սխալ ըմբռնողութեան պատճառով, բաղմաթիւ տարակուսանքներ են ծագած: «Բայց, ասում է Խորենացին, Ս. Գրքի այդ հին

թարգմանութիւնը շատ մասերով, շատ կողմերից թերի էր, որովհետեւ նրանք, այսինքն՝ չին ժամանակներում ապրող Սահակն ու Մեսրոպը մեր գիտութեան անտեղեակ էին, որ գործն աւելի կատարեալ լինէր, այս նպատակով այժմ մեծն Սահակն ու Մեսրոպը (ակնարկ Ռչաունեայ ու Պորխոսունեայ եպիսկոպոսներին) մեզ Աղեքսանդրիա ուղարկեցին, որ յոյն լեզուի գիտութեան հմտանանք, յոյն լեզուի չիմնական ուսումնասիրութեամբ գրադուինք ու վերծանութեան ձեւարանին իսկապէս անդամ դառնանք»:

Ի նկատի առնելով՝ որ Պորենացու վերոյիշեալ հատուածի մէջ «Ձոր առեալ մեծին Սահակայ եւ Մեսրոպայ» ենթակաները հետ ընդհետ կրկնուում են, որ շատ անտեղի է, եթէ միւսինոյն անձնի համար աւելի, ուստի այնպէս ենք կարծում, որ վերջին անգամ կրկնուած «մեծն Սահակ եւ Մեսրոպը» խօսքերը Ձ. դարում ապրող Ռչաունեայ Սահակն ու Պորխոսունեայ Մաշտոց եպիսկոպոսներին են վերաբերում: Անունների հոմութիւնը հատուածի միտքը միտգնած է, բայց վերոյիշեալ բացատրութեամբ ամէն տեսակ թիւրիմացութիւններ վերանում են եւ շատ իրր գիտական արտայայտուած կարծիքներ չքանում են: Յայտնի է, որ Պորենացին «Մաշտոց» անուանակոչութիւնը միայն մի անգամ է գործածում՝ առելով. «Ձոր ետ թարգմանել երանելի վարդապետն (այս բառից յետոյ մի քանի տպագրութիւններ ի դուր աւելացնում են «մեր» բառը, որ բոլորովին անտեղի է) Մաշտոց»: Ուրիշ ամէն տեղ Կորիւնին հակառակ Մաշտոց անունն փոխարէն նա Մեսրոպը անունն է գործածում, գտնելով այս անուանակոչութեան մէջ մի վսեմութիւն, յարգանքի առարկայ մի բան եւ որ ցարդ սոսուգապէս լուսարծուած չէ (1): Անշուշտ նոյն եղանակով էլ Պորխոսունեայ Մաշտոց եպիսկոպոսին յարգած լինելու համար նրան Մեսրոպը է

(1) Մատաթիա Գարագաշեան մէջբերութիւն (փառաւոր) արաբերէն բառին հայացմամբ կազմուած պատուանուն մը կը համարի Մեսրոպ կամ Մեսրոպը բառը, բռնագրօսիկ մեկնութիւն: Գառնիկ Ֆետցիեան Ս. Մաշտոցի այդ պատուանունը կը համարի, աւելի խելի մօտ մեկնութեամբ մը, մար, եւ սրովէ բառերով կազմուած, «սրովբեանման տէր» իմաստով (Տես իր ուսումնասիրութիւնը Մաշտոցի վրայ, Անահիտ 1904, եւ Կորիւնի Վարդ Մաշտոցիին քննական հրատարակութիւնը պարունակող իր հոյակապ հատորը):

(Ծ. Խմբ.)

կոչում: Գալով Սահակ Ռչաունեա տուած «մեծ» մակդիրին, կարող ենք տեսլ, թէ այդ կամ ձեռագրական սխալ է, եւ կամ դարձեալ խորենացու յարգանքի նշան:

Թէ ինչ կողմերից արդեօք Ս. Գրքի թարգմանութիւնը թերի էր, այս կէտը պարզել անկարող ենք, քանի որ հնագոյն ձեռագրեր ունենալու բախտից զրկուած ենք: Բայց անշուշտ Ս. Գրքի թարգմանութեան մէջ թերութիւններ կային, որ պէտք էր ուղղել: Որքան էլ որ Սահակ Պարթեւը յոյն լեզուի գիտութեամբ շատ Յոյներից զերազանց էր (Փարպեցի), բայց եւ այնպէս նա յոյն լեզուն այնպէս ուսումնասիրած չէր Դիոնիսեան քերականութեամբ, ինչպէս մեր երկրորդ կամ կրտսեր թարգմանիչները եւ որը նրանց սեպհական արուեստը, գիտութիւնն էր կազմում. ուստի Ս. Գրքի բնագրի սխալ ըմբռնումներ կամ սխալ թարգմանութիւններ՝ մարդարէութիւնների կամ Սաղմոսների մէջ, կարող էին հայ թարգմանութեան մէջ սպրդած լինել. ահա այսպիսի թերութիւններ պէտք էր ուղղել, եւ երկրորդ կամ կրտսեր թարգմանիչները այդ ուղղումները փորձեցին կատարել:

Պէտք է դիտել, որ ճիշդ այս ժամանակներում Ասորիների մէջ եւս ձգտում երեւցաւ Թրակացու քերականութեան ուսումնասիրութեամբ պարապելու եւ իրենց ունեցած չին վեկիտո թարգմանութիւնը Եօթանասնիցի Որդինէսի վեցիջևանի համեմատութեամբ սրբազրելու, որ եւ կատարուած է Մարուգի եպ. Փիլաքսէնի ձեռքով (515):

Անշուշտ՝ երկրորդ աշակերտների սեպհական արուեստը, գիտութիւնն էր կազմում, Ս. Գրքի մեկնաբանութեան մէջ Աղեքսանդրիայի վերծանութեան^(*) ձեւարանի ուղղութեան հետեւել, այն է՝ Ս. Գրքի մէջ յիշուած ամէն մի դէպք, ամէն մի երեւոյթ խորհրդական, այլաբանական իմաստով բացատրել, Փիլոն երբա-

(*) Կորեմացու վերաբանութիւն բառի փոխարէն, որ այնքան դատարկ մեկնութիւնների ու սխալ քարգմանութիւնների տեղիք է տուած, նախադասում ենք «վերծանութիւն» նշգրիտ ընթերցումը պահել, ինչպէս որ Վեմտիկի 1796 թուի հրատարակութիւնն էլ ունի: Վերծանութիւն՝ նշանակում է մեկնութիւն եւ տարբեր է Թրակացու վերծանութիւնից, որ է՝ քաջ առգաճմութեամբ ընթերցում: Մամբրէի մակդիրն եւս՝ «վերծանող», նշանակում է մեկնիչ եւ ոչ թէ ընթերցող:

յեցու (50) հետեւողութեամբ, մինչդեռ Սահակ Պարթեւ Եփրեմեան սիմվոլիկ կամ Անտիոքեան մեկնաբանական դպրոցին էր հետեւող, որի լաւագոյն ներկայացուցիչ Յովհան Ոսկերեանն ինչպէս եւ Եփրեմի Գործերը ոսկի հայ լեզուով իր աշակերտների ձեռքով հայ ժողովրդին էր տուել: Անտիոքեան դպրոցն արհամարհանքով էր նայում Աղեքսանդրեան դպրոցի ներկայացուցիչների վրայ՝ կոչելով նրանց «Կիզայոն եւ կոկոզարան փրկիստօփայք» (Վարդան, էջ 77):

Հայ պատանիների աստուածաբանական ուսումը «Առ ալլս առաքելով անեցուցանելոյ» ձգտումից զատ՝ Դուինի ժողովրդի մի առօրեայ պէտքի լրացման եւս կարօտութիւն ունէր, խանդարուած եկեղեցական տոմարը կարգաւորել, որպէս զի Հայ Եկեղեցու տօներն ու հայ թուականն այնուհետեւ անսայթաք առաջ երթան, իսկ տոմարական խնդիրների կարգաւորումը հնագոյն ժամանակներից միմիայն Աղեքսանդրիայի հմուտ մաթեմատիկոսներին էր վերապահուած:

Ահա այսպիսի նպատակներով Աղեքսանդրիա եւ ոչ թէ Բիւզանդիոն ուղարկուեցան հայ երիտասարդ կրօնաւորներ, որոնք հելլենարան դպրոցի հիմքը հաստատեցին ո՛չ միայն հայ անտաշ, պարզ մտքին յունական փիլիսոփայական, գիտելիտիկ մտքի ուղղութիւնը հաղորդելով, նրան հելլենացեւելով՝ այլ եւ այդ մտածողութեան համեմատ եւ հայ գրական լեզուն կազապարելով:

6. Բայց պաշտօնապէս Աղեքսանդրիա ուղարկուած աշակերտներից դուրս՝ կային բազմաթիւ հայ պատանիներ, որոնք իբրեւ հպտակներ՝ ենթակայ էին յոյն կուլտուրայի ազդեցութեան:

Զ. դարում յոյն կուլտուրան, թէեւ միանման ամէն տեղ ընդհանրապէս, բայց տարբեր ուղղութիւններ ունէր Աղեքսանդրիայի եւ Անտիոք-Բիւզանդիոնի մէջ, եւ այս տարբերութիւնը լիարդէս երեւում է Աղեքսանդրիայի ու Բիւզանդիոնի հայ ուսանողների գրական գործերի ու գրական լեզուի մէջ: Աղեքսանդրիայի քրիստոնէական դպրոցն աւելի փրկիստօփայկան, աւելի մտահայեցողական ուղղութիւն ունէր եւ նուիրուած, քրիստոնէութեան հիմնական գաղափարի «լուսոյ»-ն եւ փրկչաբանական այլ նուրբ խնդիրների հիմնաւորութեան ու պարզաբանութեան: Այս ուղղութեան գլխաւոր ներկայացուցիչներն էին՝ Կղեմէս Աղեքսանդրիացի, Որոգենէս, Աթանաս, Գրիգոր Նա-

զիանցացի, Գրիգոր Նիսացի եւ Կիւրեղ Աղեքսանդրիացի, որոնք եւ բոլոր տիեզերական ժողովների մէջ առաջնորդող դեր խաղացին: — Միաժամանակ՝ հեթանոս փիլիսոփայութեան զարգացման մէջ էլ Աղեքսանդրիան շատ առաջ էր գնացած. նոր-Պլաթոնորեան վարդապետութիւնը, նոր-սղատոնականութիւնն իր բոլոր ճիւղաւորումներով (Պորփիր, Սաք) եւ Գնոստիկեան վարդապետութիւնը՝ քրիստոնէական ու հեթանոսական դադափարների խառնուրդ, այնտեղ մեծ զարգացման հասան: Իսկ գնոստիկեան դադափարները խորապէս ազդեցին առաջին քրիստոնեայ Հայրերի գրութեաների վրայ, ինչպէս եւ Հրէական Աղեքսանդրեան դպրոցը, որ սղատոնեան, ստոյիկեան վարդապետութեանց ու Հրէութեան հաշտարար խառնուրդ էր, որի գլխաւոր ներկայացուցիչն էր Արիստոբուլ եւ մանաւանդ Փիլոն (50):

Դրական գիտութիւններն էլ, Պտղոմէոս Եղբայրասէրի օրերից սկսած որ այնտեղ Աղեքսանդրիայում Գրատուն ու Մուսէոն հաստատեց եւ որի մասին ինքը Պորենացին էլ հիացմունքով է խօսում (Ա.բ.), Գ. դարից ն.ք.Ք. մինչեւ Զ դար՝ բարձր զարգացման հասան: Բնագիտութիւն, մաթեմատիկա, երկրաչափութիւն, տիեզերագիտութիւն, բժշկութիւն եւ այլ մալակցութիւններ, որոնց սկզբնատուներն է յիշատակում Պորենացին Ա.բ. գլխում, իրենց ընտիր ներկայացուցիչներն ունեցան:

Ոչ պակաս զարգացման հասաւ եւ լեզուի ուսումը — քերականութիւնը, որ ո՛չ միայն լեզուի ուսում էր, այլ եւ քննադատութիւն ու գրականութեան պատմութիւն — ստուգաբանութիւն, ներկուս վերծանութիւն, գրուցատրութիւն, հնադէտ պատմութեանց բացատրութիւն եւ մանաւանդ դատումն քերականաց: Դիօնեսիոս Թրակացին ու Արիստարքոսը լեզուագիտութեան մէջ ամենահեղինակաւոր անձնաւորութիւններն էին: Միայն մի բանի մէջ տկար էր Աղեքսանդրիան, այն է՝ բանաստեղծութեան ու վիպական գրականութեան ըստեղծման մէջ: Նա ժողովրդից խաղաղ կրտսեւած էր. բայց Հոմերոսի առաջին ուսումնասիրութիւնն այնտեղ կատարուեցաւ:

Այսպէս չէր Բիւզանդիոնը (Անտիոքը): Դաւանաբանական խնդիրները հիմնուած չէին հին յոյն փիլիսոփայական սկզբունքների վրայ, ինչպէս էին Որոգենէսի, Գրիգոր Նազիանցացու կամ Նիսացու եւ ուրիշների բարոնումները: Սրա մտածողութեան հիմքը աւելի իրական էր, աւելի դործնական: Բիւզանդիոնի

գպրոցի մէջ հին յոյն փիլիսոփաների գրութեաները գաղափարների, մտածողութեան տեսակէտով չէին ուսումնասիրուած, այլ գուցէ լոկ ոճական: Առաջին անգամ Ղեւոնդիոս Բիւզանդացին (543), Արիստոտէլի Ստորագութեանց ու Վերլուծականքի ուսումնասիրութեամբ, որոնք մէկ անունով «Օրդանոն» կոչուեցան, իբրեւ թէ մտածողութեան գործիք, սեռի ու տեսակի գաղափարները ուղեց պարզել ու Քաղկեդոնի դաւանաբանական սկզբունքները հաստատելու ծառայեցնել: Նա աշխատեց հաշտեցնել Կիւրեղ Աղեքսանդրիացուն Հռովմի Լեւոն Ա. Պապի հետ:

Բիւզանդիոնի գպրոցը ո՛չ մի նշանաւոր մաթեմատիկոս, տիեզերագէտ, երկրաչափ ու բժշկ չունէր. գրական գիտութիւններն այնտեղ անտեսուած էին: Զկային նոյն խի քերականագէտներ. միայն կային հմուտ օրէնագէտներ, ու բանաստեղծներ, որոնք հարուստ ժողովրդական վիպական գրականութիւն մշակեցին, ինչ որ Աղեքսանդրիան չունէր:

Զ. դարի հայ ուսանողների տարբեր մըթնոլորտների մէջ ստացած կրթութեան արդասիքն են ե՛ւ նրանց գրական գործերը, ե՛ւ գրական լեզուն: Աղեքսանդրեան գպրոցի հելլենաբան հայ թարգմանութիւնների կողքին, որոնք իրական, գործնական կեանքի հետ ոչ մի առնչութիւն չունին — Իրենէոսի Յոյցք, Կուզի Հակաճառութիւն, Որոգինէս, Փիլոն, Նիւսացի, Թրակացի, Արիստոտէլ եւլն. եւլն., մենք տեսնում ենք նոյն ժամանակի Բիւզանդեան հայ թարգմանիչների գործերը, իրենց բովանդակութեամբ հայ ժողովրդի մտքին ու երեւակայութեան աւելի մօտ, Պատմութիւն Վարուց Աղեքսանդրի, Իմաստութիւն Սիկարայ, Եղովբոս, Անվաւերականներ, Բարուախօս, Սեկունդոս, Սեքստոս եւն. եւն.: Աղեքսանդրեան հայ ուսանողների գրական լեզուն չափաւոր կամ խրթին հելլենաձեւ է, ժողովրդական բարբառից հեռու, չափուած ու ձեւուած Թրակացու քերականութեան կանոնների համեմատ: Նախկին պարզ բառերի փոխարէն՝ նոր ածանցներով կազմուած նոր բառեր ու ձեւեր — բաղկանալ, ներգործել, ներմարդութիւն, սէ, դէ, նէ, էգնայ, էմբռնել, մի, մու, եզ, եւլն. — մտան հայ լեզուի մէջ, եւ նրանց շարադասութեան կարգն ու կրճատման օրէնքները փոփոխութեան ենթարկուեցան: Մինչդեռ Բիւզանդիոնի հայ ուսանողների լեզուն ազատ է Թրակացու խրթնարանութիւններից եւ աւելի մօտ հայ ժողովրդական բարբա-

ռին թէ՛ բառերով եւ թէ՛ շարադասութեամբ, խոսն օսկեղարեան գեղեցիկ ձեւերով ու դարձուածքներով, ինչպիսի խոսնուրդ էր ներկայացնում եւ նոյն ժամանակի բիւզանդական հոեւորների, բանաստեղծների ու ժամանակագիրների լեզուն:

Այս հիմնական դանադանիչ կէտերի մասին խօսելուց յետոյ, որոնք Սորենացու դանդաղ աւելթ տունին, թէ «ծիծաղին զմեօք եւ արհամարհեն զանհաստատնովք եւ որ ոչինչ պիտանացու ունիցի արուեստ», անցնենք մեր գրութեան ընդհատուած թելը շարունակելու:

7. Ասում ենք, որ 553 թուին ասորի Արդշոյ երէցի եպիսկոպոս ձեռնադրուելուց յետոյ հաւանօրէն կատարուեցաւ երկրորդ թարգմանիչների առաքումը Աղեքսանդրիա: Աշակերտների այս խումբը կազմում էին. 1. Եղիշէ, 2. Դաւիթ, 3. Մովսէս Սորենացի, 4. Մամբրէ Վերծանող, 5. Զորափորեցի Աբասի որդի Գրիգոր եւ 6. Քէկան որդի Վրթանէս՝ երիտասարդ կրօնաւորները, ամենքն էլ մի սրտով ու գաղափարով տողորուած մարդիկ:

Այս հայ երիտասարդ ուսանողները Դուինից դուրս գալով՝ ամբողջ Հայաստանի հարաւային գաւառները գժուարին ճանապարհներով կտրում, անցնում են («ըստ հարաւային մասանցն պարայածեալք») մտնում են Եգիպտիս, որ այն ժամանակները Հայոց գաւառակից միաբնակ Ասորիների կեդրոնն էր. եւ նոժամանակեայ այստեղ մնալուց եւ Եգիպտոյ գիւանը աչքէ անցնելուց յետոյ՝ նրանք իրենց ճանապարհը շարունակում են, եւ 554-555 թ.թ. մօտենում են «ի Ս.Տեղիս երկրպագանել»: Վերջապէս Պաղեստինի Կեոարիա քաղաքն են զնում «մնալ վայրկեան մի ի Պաղեստինացուց հրահանգս», փոքր ի շատ ուսանելու այն գպրոցին մէջ, որ տակաւին Որոգինէսն էր հաստատած՝ ճիշդ Աղեքսանդրիայի գպրոցի ուղղութեամբ: Եղիշէն իր Թափոր լեռան նկարագրութեան մէջ այս հայ կրօնաւորների հոգեկան զգացումներն է պարզում եւ միանգամայն գեղեցիկ խօսքերով նոյն տեղի միանձանց կեանքը պատկերացնում:

Պէտք է ի նկատի առնել, որ այս ժամանակներն Երուսաղէմի եկեղեցին էլ, կամ Սիրոնն էլ, ինչպէս մի խօսքով ասում էին, նոյնպէս հակադրեղեղոնական դաւանութիւն ունէր, եւ մեր ուսանողները բնականաբար իրենց ազատ էին զգում իրենց գաւառակիցների շրջանում, եւ հալածանքի չէին ենթարկուում, ինչ որ տեղի ունեցաւ մի քանի տարի վերջը, երբ Յոր-

նաղ (Իսլենալ) պատրիարքը 572 թուին քաղկեդոնիկ դաւանութիւնն ընդունեց, իսկ յաջորդ Յովհաննէս պատրիարքը (574-577) հալածանք հանեց Հայերի դէմ՝ սրանց վանքն իսկ այրելով:

Վերջապէս հայ երիտասարդները ցամաքային երկայն ճանապարհներ դանդաղօրէն («սաղապաճեմ») կտրել-անցնելուց յետոյ՝ 555 թուերին Եգիպտոսի Աղեքսանդրիա քաղաքն են հասնում, որ իրենց բուն նպատակն էր կազմում: Դուրս եւ Աղեքսանդրիա, այնքա՞ն հեռու իրարից: Այս երկայն ցամաքային ճանապարհորդութիւնը, ինչպէս եւ վերադարձի ծովային ու ցամաքային ուղեւորութիւնը խորեանացուն առատ նիւթ տուին իր վերջին աշխատանքը՝ Աշխարհացայցը գրելու, մանաւանդ նրա Հայաստանի մասը:

Տ. Ի՞նչ սորվեցան, ումնի՞ց, եւ ո՞րքան ժամանակ մնացին այստեղ, ահա հարցեր, որոնց պատասխանը պէտք է տալ: Բնականաբար նրանք այն պէտք է սովորէին, ինչի համար յատկապէս ուղարկուած էին. 1. լիովին հմտանալ պանծալի յոյն լեզուին՝ նրա լիակատար քերականութիւնն ուսումնասիրելով. 2. զարգացնել, աճեցնել իրենց ունեցած աստուածաբանական հմտութիւնը՝ վերծանութեան ճեմարանին աշակերտելով:

Խորենացին առանձնապէս ուսումնասիրում է քերականութեան այն մասը, որ յանգեալ արուեստի՝ պոետիկոսութեան մասին է խօսում (Խոր. Գ. լր.), այն է «դատումն քերականաց, որ լաւագոյն է յամենեցունց, որք ներ արհեստիս են»: Վերջապէս Խորենացին եւ իր ընկերները «ամենիմաստ արուեստն» (գիտութիւն) են սովորում (Խոր. Ողբ), այն է՝ ուսողութիւն, երկրաչափութիւն, աստղագրաչափութիւն, որ անհրաժեշտ էին տոմարական գիտութիւններ ձեռք բերելու համար, որով կարող էին Հայ Եկեղեցու խանդարուած տոմարը կարգաւորել ու հայ տոմարը հաստատել:

Խորենացու եւ իր ընկերների գրուածների մէջ՝ իրենց ուսումնասիրութեան հետքերը լիովին արտաբայում են: Նրանք ամենքն էլ իրենց դորձածած լեզուով Դիոնիսեան քերականութեան հետեւող են ընդհանրապէս, իրենց կրօնական գրուածներով ու թարգմանութիւններով՝ վերծանութեան ճեմարանի աշակերտ: Իրենց տիեզերագիտական ու բժշկական ծանոթութիւններով (մանաւանդ Եղիշէն ու Խորենացին) նոյն են: Ապաքէն յայտնի է, թէ ի՞նչպիսի հիացմունքով խօսում է Խորենացին ամե-

նիմաստ արուեստի մասին իր Պատմութեան Ա. բ. գլխում (որպէս զԱյբ առ Բէ եւ զԹօ առ Փիւրն): Վերջապէս քերականների քննադատութեան գեղեցիկ օրինակ Պիտոյից Գիրքն է տալիս: Հայ ուսանողներից միմիայն Դաւիթ Անյաղթ իր անհատական բերմունքով Արիստոտէլի ու Պլատոնի փիլիսոփայութեան ուսումնասիրութեամբ է զբաղւում, «Պաշի ներբող»ով կրօնական դրականութեան հարկը տալուց յետոյ:

Ովքե՞ր էին հայ ուսանողների ուսուցիչները: Այս մասին տեղեկութիւն չունինք. Խորենացին իր ուսուցչին առանց բնիկ անունը տալու՝ նոր Պլատոն է կոչում: Ամենիմաստ գիտութիւն ականդողը երեւի Դիոնեսիոս Կրտսեր վանականն էր (556) եւ կամ սրան յաջորդող տոմարական գիտութեան հմուտ Էսա Աղեքսանդրիացին, որ քրիստոնէական տոմարն առանձին ժողովով 56 թուին հաստատեց:

Կարծում ենք, որ եօթը տարիներ Աղեքսանդրիայի մէջ մնալուց ու ետանդոտ աշխատանքից յետոյ (կամ Խորենացու բառերով «անվեհեր երազութեամբ կրթեալք»)՝ հայ ուսանողները ճանապարհ են ընկնում հայրենիք վերադառնալու, ցանկութիւն ունենալով նաեւ տեսնել Աթէնքը, Սոկրատի, Պլատոնի եւ ուրիշ փիլիսոփաների հայրենիքը: Նաեւ լով Կիպրոսի ու Կիլիկիայի ափերով՝ նրանք Ելլադա ընկնելու փոխարէն Իտալիա ընկան, եւ առ ժամանակ Հռոմ մնալուց յետոյ, որ այս ժամանակները քաղաքական շփոթումներից բուրբուրէին աղատ էր, նրանք Աթէնք են անցնում, ուր ձմերելուց յետոյ 565 թ. գարնան Բիւզանդիոն են մտնում, Յուստինիանոսի մահուանից (11 նոյ. 565 թ.) մի քանի ամիս առաջ, իրենց հայրենիքը տեսնելու փափաքով, որից 12 տարիներ առաջ հեռացել էին:

Չ. Ի՞նչ վիճակի մէջ ձգել էին նրանք Հայաստանը եւ ի՞նչ վիճակի մէջ գտան: Համեմատաբար ինքզնիք էր Հայաստանի դրութիւնը կրօնական ու քաղաքական տեսակէտներով 553 թուին, երբ նրանք հեռացան: Բայց 12 տարուայ մէջ շատ բան փոխուեցաւ: Աշտարակացի Ներսէսի վերջին տարիները Նեստորականների քարոզութիւնը Հայաստանի մէջ կրկին զօրացաւ: Նրանք մինչեւ իսկ համարձակութիւն ունեցան Դուրիի մէջ առանձին Եկեղեցի հաստատել ու շփոթումներ առաջ բերել: Ստիպողական հարկից ստիպուած Ներսէս կաթողիկոսը Դուրիի 555 թուի ժողովը գումարեց եւ բուռն զօրութեամբ Նեստորականների դէմ կռուեցաւ:

Նրա յաջորդ Յովհան Գարեղինացու օրով (557-574) մեր երկրի մէջ քաղաքական ու կրօնական յուզմունքներ աւելի եւս զօրացան, անդուստի նկատորականներն ու քաղկեղոնականները մեծ նուաճումներ էին կատարում թէ՛ Սիւնեաց, եւ թէ՛ Հայութեան դաւանակից Աղուանից երկրում: Սիւնեաց Վահան իշխանն ու Վրթանէս եպիսկոպոսը Հայութեան լրութիւնից բաժանուեցան եւ սէր ու խնամք ցոյց տրւին Նկատորականներին՝ անխող գտնուելով Յովհան կաթողիկոսի ժողովական թղթին (565): Հայաստանի մէջ միաժամանակ Պաղլիկեան կոչուած աղանդաւորներն եւս սկսան գործել եւ քարոզել, թէ եկեղեցին ու իր բնութեամբ խորհուրդները արժէք չունին, թէ ո՛չ մեղք կայ եւ ո՛չ էլ մեղքի համար պատիժ, հետեւաբար բարոյական ամեն կապանքների խորտակում: Պարսիկ մարզպաններն եւս ամէն կերպ աշխատում էին հայ ժողովրդի մէջ կրակապաշտութիւն տարածել, նրան հարկերով կեղեքել, բարոյապէս ապականել ու շնութիւնը խրախուսել: Ահա մի այդպիսի շփոթումների ժամանակ Աղեքսանդրիայի հայ մտաւորականները Հայաստան դարձան: Նրանց պաշտպան Ռշտունեաց Սահակ եպիսկոպոսը 560 թ. արդէն վախճանած էր եւ նրան Քրիստափոր եպիսկոպոսն էր փոխարինած. վերադարձի ժամանակ 565 թուին մեծաւ նոյնպէս Խորխոռունեաց Մաշտոց եպիսկոպոսը:

Իրենց վերադարձից յետոյ էլ հայ երկրի դրութիւնը քաղաքականապէս աւելի վատթարացաւ. չորս հինգ տարի վեցջր 572 թուին Վարդան Բ. Մամիկոնեանի ապստամբութիւնը ծագեցաւ. հայ նախարարութիւնը երկպառակեցաւ, հայ երկիրն այրացաւեր դարձաւ. Պարսից ուժի առաջ Վարդանն ու իրեն համախոհ իշխանները տկարացան եւ Յովհան կաթողիկոսի հետ 572 թուի վերջերը Բիւղանդիոն փախան: 574 թուին Գարեղեանն այստեղ վախճանեցաւ եւ նրան յաջորդեց Հայոց Հայրապետութեան երեւի առժամեայ տեղապահ Եղուարդեցի Մովսէս եպիսկոպոսը, որ թէեւ Հայոց Հայրապետանոցի մէջ սնուած ու կրթուած անձնաւորութիւն էր, բայց քաջաբիւն գործիչ, դաւանական խնդիրների հմուտ եւ կրթուած եկեղեցականներին պաշտպան (ինչպէս օրինակ Կիւրիոսին): Սա էր երեւի հոգում նաեւ Աղեքսանդրիա ուղարկուած հայ կրօնաւորների թռչակը:

Գարեղինացու օրով (565) մեր կրթուած կրօնաւորները Հայաստան դառնալով՝ Եղուար-

դեցի Մովսէս եպիսկոպոսի պաշտպանութեամբ Հայոց Հայրապետանոցի մէջ պաշտօններ ստացան: Վարդան պատմիչ (եր. 76 եւ 77) ասում է, թէ «Մովսէս, Մամբրէ եւ Դաւիթ հոգային գտուն կաթողիկոսարանին» նրա սննդեան պէտքերն էին հոգում, եւ դարձեալ թէ «Անդրանիկ իսկ էին եկեղեցւոյ եւ դատաւորք Հայրապետանոցին»: Միւսների — Վրթանէսի, Գրիգորի եւ Եղիշէի — մասին բան չէ ասուած. բայց անշուշտ սրանք էլ որ եւ իցէ պաշտօն ունէին. Վրթանէսի շարսաղար(*) կոչումն արդէն ակնարկում է, որ նա Հայոց մայր - եկեղեցու երգապետը, դասադրուին էր: Եղիշէն դրան երէց էր, այսինքն՝ հայ Հայրապետարանի սննեկապետը. մնում է միայն անորոշ Զորափորեցի Գրիգոր քերթողի պաշտօնը: Ապա սրանց ամենքին «Ժողովորդ», ամենքի «ճաւահանգիստ, օգնական ու յորդորեցուցիչ» Եղուարդեցի Մովսէս եպիսկոպոսը հանդիսացաւ, որի ձեռքին էր հաւանօրէն գտնուած Հայոց Հայրապետութիւնը Վարդան Բ. ի ապստամբութեան ու Գարեղինացու փախստեան ժամանակ:

Իրրեւ կրթուած մտաւորականներ՝ որոնք պէտք է մտածէին բնականօրէն իրենց Հայրենիքի վիճակի վրայ, որ այդ ժամանակ Պարսից ու Յունաց տէրութեան մէջ տառապում էր եւ միեւնոյն ժամանակ ինքն էլ իր մէջ երկպառա-

(*) Այս բառը ծագում է՝ չար՝ եղանակ, երգ, եւ սաղար՝ պետ, գլուխ բառերից: Զ. դարի բառ է, ինչպէս եւ չարական բառը՝ կազմուած չար եւ կան յոգնականացուցիչ ածանցով՝ զօրական բառի նման: Շարի եւ երգի տարբերութիւնն այս է, որ առաջին բառը գործ է ածուած հոգեւոր իմաստով, իսկ վերջինը՝ աշխարհային իմաստով, ինչպէս որ Եղիշէն ասում է. «Երգս լիտութեան», «Երգս հեթանոսական»: Այդ բառերի տարբեր իմաստով գործածութիւնը Խորենացու մօտ եւս տեսնուած է. նա ցոյց է տալիս եւ չարի՝ հոգեւոր երգերի՝ ծագումը, ասելով. «Եւ զչա՝ առ սէ» (Ա.բ.): Յայտնի է, որ եկեղեցական քաղցր եղանակների առաջին հեղինակ հանդիսացաւ Բ. դարում գնոստիկ Բարդեմանը իր գաղափարները քաղաքելու համար: Նրա օրինակին հետեւեցին Եփրեմ Ասորին եւ Յոյները: Մեր եկեղեցական եղանակների առաջին կարգաւորումը, ինչպէս եւ հոգեւոր երգերի յօրինումը միմիայն Զ. դարից է: Ապագային չար բառը մոռացուած է եւ երգ բառը անխտիր գործածուած է:

կուսած, պէտք էր հայ ժողովուրդին մի ազդու-
թեան, մի հայրենիքի գաղափար քարոզել, քա-
ջութեան ու անկեղծութեան ոգի ներշնչել նը-
րան կենդանի պատկերներով: Առաջին անգամ
Եղիշէի ու Խորենացու գրչի տակ ազգ, հայրե-
նիք բառերը լայն խմատով են գործածուում եւ
հայրենասիրութեան ու ազատութեան համար
գիտակցական մահը դրւատուում:

Վերոյիշեալ գործիչներէից իւրաքանչիւրն
որ եւ է խոշոր նախարարական տան հետ է
կապուած՝ այդ մտերմութեամբ ընդհանուր
միութեան գաղափարն առաջ տանելու համար:
Եղիշէն՝ Մամիկոնեանց տան հետ. Զորափորե-
ցի Գրիգորը՝ Վրաց հետ, որի շնորհիւ ան-
շուշտ 572 թուի ապստամբութեան Վրացիք եւս
մասնակցութիւն ունեցան. Վրթանէս քերթո-
ղը՝ Բագրատունեաց հետ. իսկ քերթողահայր
Մովսէսը՝ Խորխոռունի, Ամատունի, Կամսա-
րական, Բագրատունի ու Արծրունի իշխաննե-
րի հետ: Միւս երկու հայ մտաւորականները՝
Մամբրէն ու Դաւիթ Անյաղթը իրանց բնական
հակումով ու գրական պարագմունքներով ան-
շուշտ սակաւ մասնակցութիւն են ունեցած
հայ կեանքի հասարակական խնդիրներին:

10. Խորենացին իր ժամանակի Խորխոռու-
նեաց ու Ամատունեաց մասին մեծ գովեստով է
խօսում. «Արք քաջք եւ անուանիք, որպէս եւ
որք առ մեծք են այժմ երեւելիք» (Ա. Ժր.). Ա-
մատունեաց համար ասում է. «Որպէս եւ այժմ
իսկ է տեսնել՝ անձնեայք եւ բարեձեւք եւ ու-
ժեղք» (Բ. Ժէ.): Մինչեւ է. դար որ եւ է նշա-
նաւոր Խորխոռունի եղած չէ բաց ի Վարդան
Մամիկոնեանի զինակցից, եւ ոչ էլ Ամատունի՝
բաց ի Վահան սպարապետից ու հաղարապե-
տից: Առաջին անգամ է. դարի սկզբներում հը-
րապարակ է հանում Սերէսը երեք քաջ ու ա-
նուանի Խորխոռունիներ, որոնք ձգտումն
ունեցան Պարսից ու Յունաց լուծը թօթափելու
եւ ազգային թագաւորութիւնը վերականգնե-
լու. 1. Առաւ Խորխոռունի մեծ պատրիկը 602
թ. 2. Թէոդորոս Խորխոռունին 610թ. եւ 3. Վա-
հան Խորխոռունի 650 թ.: Սրանց գործակից ու
գաղափարակից էին՝ 1. Կոտիտ Ամատունի. 2.
Թէոդորոս Տրպատունի. 3. Մամակ Մամիկոն-
եան. 4. Սամուէլ Վահեւունի եւ 5. Ստեփան-
նոս Սիւնի: Անշուշտ Խորենացին իր վերոյի-
շեալ գովեստի խօսքերով է. դարի այս նշա-
նաւոր իշխաններին է ակնարկում: Սրանք 572
թուի Վարդան Բ. ի ապստամբութեան մասնա-
կից եղան, որ կատարուեցաւ «հանդերձ միա-
բանութեամբ ամենայն Հայաստանեօք»: Այլըս-

տամբութեան անյաշնոյ ելքի պատճառով՝ Հա-
յաստանի ազատութեան գաղափարը այս նա-
խարարների մէջ երբեք չմեղաւ, այլ ապագա-
յին կրկին ու կրկին արծարծուեցաւ:

Ինչպէս որ Եղիշէն Դաւիթ երէց(*) Մամի-
կոնեանի խնդրով գրած (568-570 թուերին)
Վարդանանց Պատմութեան մէջ քաջութեան ու-
գի ու միութեան գաղափար է ներշնչում իր
ժամանակի հայ իշխաններին, գիտակցական
մահ իրենց ազգի, իրենց հայրենիքի համար,
ճիշդ այդպէս է վերաբերուում Խորենացին իր
ժամանակի հայ նախարարներին: Իր 565-568
թուերին գրած «Պիտոյից զիրքը» գաղափար-
ներով շատ հարուստ է, ու նրա հոգին լիովին
պարզում: Պիտոյից Գրքի ու Պատմութեան
ներքին աղբյւրը թէ՛ ըստ բովանդակութեան,
եւ թէ՛ ըստ ոճոյն՝ անկասկած է, եւ միայն կաշ-
կանդուած մտքերի համար դրանք կարող են
տարբեր հնդկանկների գործ համարուիլ: Եր-
կու գրութեան տարբերութիւնը այն բանի
մէջ է միայն, որ առաջինը համեմատաբար ե-
րիտասարդ հասակի գործ է, վառվռուն, բուռն
աւիրնով գշուած, հելլենարան լեզուով, իսկ
երկրորդը՝ ծերութեան հասակի գործ, աւելի
հանդարտ, աւելի պարզ ոճով:

Իր այս նշանաւոր գործը Խորենացին ըս-
կսում է մանուկների դաստիարակութեան խն-
դրով. նախ եւ առաջ շնչուում է այն մեծ
նշանակութիւնը, որ մանուկների դաստիարա-
կութեան մէջ մանկավարժներն ունին, որոնց
խնամքին են յանձնում ծնողներն իրենց զա-
ւակներին, որ աղագային լաւ մարդ դառնան,
իրենց պարծանք եւ իւրաքանչիւր տան ու դա-
ւառի շինութեան պատճառ: Տոյց է տալիս
լաւ ու վատթար դաստիարակութեան ու դա-
ստաւորութեան արդասիքը, թէ ամէն ինչ աշխա-
տանքով (կրթութեամբ) է առաջ գնում, իսկ
խամութեամբ ամէն մի բնական ստացում, ըն-
դունտիւթիւն փճանում է, թէ աշխատասի-
րութիւնը ո՛չ միայն մտաւոր յառաջդիմու-
թեան է նպաստում, այլ եւ մաքուր, բարոյա-
կան կեանքի իւրացման: Անշափօրէն գովում է

(*) Այս Դաւիթը վասակ Մամիկոնեանի
բռն էր: Վասակի որդի Գրիգորն երեք գաւակ-
ներ ունէր. երէցը կամ անդրանիկը՝ Դաւիթ,
երկրորդը՝ Վասակ, իսկ երրորդը՝ Մանուէլ:
Դաւիթը իբրեւ Մամիկոնեան շատ հմուտ էր Ս.
Գրիգին: «Ո՛վ մեծդ ի գիտութեամբ Աստուծոյ»
ասում է նրա համար Եղիշէն: Վարդան Բ. եւ
Մանուէլ Դաւիթի Վասակ եղբօր գաւակներն
էին:

խմաստութեան սէրը, թէ՛ յիշատակի ու զօրութեամբ տկար մարդն իսկ՝ խելքի ու իմաստութեան շնորհիւ թէ՛ պատերազմի եւ թէ՛ խաղաղութեան ժամանակ թագաւոր է, այն ինչ անխմաստութիւնն ամէն ինչ վերիվայր է կործանում, կամ ինչպէս Պատմութեան մէջ ասում է. «Առ ի յիմաստն աղամարութեամբ» բանական ոգիով մարդն անկատար է դառնում: Այս զեղեցիկ խօսքերը յիշեցնում են մեզ Պորենացու դասընկեր Նզդէի ասածները, թէ «Կոյր զրկի ի ճառագայթից արեղական եւ տղիտութիւն ի կատարեալ կենաց»: Պորենացին յորդորում է իր ժամանակակիցներին մաքուր ամուսնական կեանք ունենալ, որ զժախտաբար աշխարհակուած էր, ինչ որ պարզում է շնացողի կամ Թէանսիի օրինակով. ցոյց է տալիս, թէ մաքուր կեանքը չորս բարոյական առաքինութիւններ է զարգացնում՝ մարդու մէջ. ա. խոհականութիւն. բ. ողջախոհութիւն. գ. արիութիւն, եւ դ. արդարութիւն: Յայանում է թէ աղքատութիւնը շատ ծանր չարիք է, որից մարդս պէտք է խուսափի առանց երբեք դատարկ մնալու. պէտք է հարստութեան ձգտիլ՝ մանուկներ սնուցանելու եւ դաստիարակելու, ծնողների ծերութիւնը տածելու, որբեր ու աշրիներ խնամելու եւ ընդհանրապէս անկարօտ ապրելու համար. բայց հոգեւոր հարստութիւնը նւթականից միշտ բարձր է: Մեր հին մատենագիրները — Նզդիկ, Փաւստոս — յիշում են այն բոլոր բարոյական արատները, որ հայ ժողովուրդի մէջ բուն էին դրած. Պորենացին եւս խօսում է նոյն բարոյական պակասութիւնների մասին — շուտեան, մատնութեան, մարդասպանութեան, հողկահարութեան, դերեզմանակրկտութեան, զրկողութեան ու հարբեցողութեան մասին, եւ ցոյց է տալիս, թէ ինչպիսի հասարակական չարիքներ են եւ թէ ինչպէս պէտք է նրանց գոյութիւնը կարճել: Պօսում է ճանապարհորդութեան տուած բաղմատեանկ օգուտների մասին, բայց չեւտում է նաեւ նաւաստիների կեանքի ծանր պայմանները, որոնք պարապոյ ժամ չունենալով անկարող են իմաստութեան հետամուտ լինելու: Պատերազմը, ասում է, չարիք է, բայց անհրաժեշտ չարիք, երբ պէտք է թշնամիների դէմ հայրենի դաւառներ ու քաղաքներ պաշտպանել, ժողովուրդը խաղաղութեան մէջ պահել, ատուածային տաճարներն ապահովել եւ ծերատաճութիւն, մանկասնութիւն ու սուրբ ամուսնութիւն ապահով կացուցանել: Պատերազմի յաջող ելքը զինուորականների հմուտ-

թիւնից ու միաբանութիւնից կախում ունի. նրանք պատերազմելիս՝ թշնամու դարանակալութիւնից պէտք է զգոյշ լինին, բայց միեւնոյն ժամանակ նրանց դէմ դարանակալութիւն նւթեն: Զինուորի պարտքն է՝ իր երկրի փրկութեան զգուշանալ, մարդկային կեանքի խաղաղութեան պահպան լինել. նրանք ամենքին սիրելի են, որովհետեւ ամենքի կեանքը նրանցից է կախուած: Զինուորների քաջութեան յիշատակը սերնդից սերունդ անցնում է անդրիններով, կենդանադրերով (Նզդէն «բնագիր» է ասում) ու մատենագրութեամբ: Բայց ինչպիսի չարիք են հասցնում դաւաճան, մատնիչ զինուորականները, որոնց տեղը զժախտաբար Հայաստանի մէջ շատ էր. այդպիսիներին առանց ներողամտութեան պէտք է անդամ անդամ յօշոտել: Զինուորութեան նուիրուած այս հիացական տողերի հետ պէտք է կապակցել այն հիացական տողերը, որ պատմութեան մէջ Պորենացին Տիգրան Ա-ին է նուիրում եւ հակառակ սրան Ոլբի տխուր խօսքերը — «Զօրականք տնարիք, զինատեսացք, հեշտասէրք...» Թողնելով Պիտոյից Գրքի միւս մտքերի մասին խօսելը՝ մեր յօդուածը շարունակենք:

11. Ինչպէս ասացինք, 572 թ. ապստամբութիւնն տնայաջող անցաւ: Հայաստանը քար ու քանդ եղաւ: Յովհան Գաբրիւկանը Բիւզանդիոն տաքադրուելով՝ ստիպուեցաւ Քաղկեդոնի դաւանութիւնն ընդունելու: Այս հանգամանքը Պարսից բաժնի եկեղեցականների մէջ մեծ շփոթում առաջ բերեց: Երբ 574 թ. Գաբրիւկանը մեռաւ եւ Հայաստանի մէջ առժամեայ խաղաղութիւն հաստատուեցաւ, Գուինի մէջ ժողով գումարուեցաւ, որ կաթողիկոս ընտրեց Նզուարդեցի Մովսէս կաթիկոպոսին, որ զբաղուեցաւ նաեւ Հայոց եկեղեցական տոմարի վերջնական հաստատութեամբ: Անշուշտ նոյն թուականին նորընտիր Մովսէս կաթողիկոսը իր անուանակից Մովսէս քերթող կրօնաւորին, որ Հայոց հայրապետանոցին մէջ դատաւորութեան պաշտօն էր վարում, Պորխոռունեաց եպիսկոպոս ձեռնադրեց, Մաշտոց եպիսկոպոսի տեղ որ վախճանուած էր 565 թուին: Ըստ երեւութի նախարարական երկիրների վիճակաւոր եպիսկոպոսները կա՛մ ցեղակցութեամբ եւ կա՛մ տեղայնութեամբ էին ընտրւում եւ Պորենացին էլ իբրեւ Պորխոռունեաց քերիկ աղքատ բայց կրթուած դիւղացի (Բ. դր.) եպիսկոպոս կարգուեցաւ:

574-590 թուականներին՝ Պարսից ու Յունաց մէջ պատերազմի ու խաղաղութեան օրեր

եղան. այդ ժամանակները Որմզդի դէմ դուրս եկաւ եւ Միհրան Մեհեանդակ Չորին իշխանը (588 թ.), որ եւ հրաւիրեց հայ նախարարներին իրեն հետ միանալ՝ խոստանալով հայ թագաւորութիւնը վերականգնել. բայց հայ նախարարները մի մասը այս հրաւերն անպատասխան թողեց, իսկ միւս մասը Մուշեղ Մամիկոնեանի առաջնորդութեամբ Վահրամին յաղթեց եւ Որմզդի որդուն Սոսրով Փարուէզին թագաւորեցրեց (590 թ.): Պարսիկները եւ Յոյների միջեւ 13ամեայ խաղաղութեան դաշինք կապուեցաւ եւ այս դաշնադրութեամբ Հայաստանի մեծագոյն մասը, Ազատ դեռից սկսած՝ Յունաց ձեռքն անցաւ: Բայց այս խաղաղութիւնը Հայաստանին բերեց աւերմունք, սուր, եկեղեցական պառակտում ու ծանր հալածանք: Մուրիկիոս կայսրը առաջին անգամ յղացաւ Հայաստանը առանց Հայի թողնելու դադափարը. հայ ժողովրդին տեղահան արաւ. նշանաւոր նախարարներ Թրակիա ու հեռաւոր Ափրիկէ արտոյրեց. Հայոց միատարր եկեղեցու դէմ ձեռք բարձրացրեց եւ 594 թուին Դուինի հանդէպ դոնուած Աւան դիւղաքաղութում քաղկեդոնիկ Յովհան Սիւնականին կաթողիկոս կարգեց: Հայաստանի յոյն զինւորները մեծամեծ չարիքներ էին գործում. ո՛չ միայն հայ եկեղեցիներն էին քանդում, կոյսեր պղծում, այլ եւ զինդ ու աղարանջան յափշտակելու համար հայ կանանց ձեռներն ու ականջները կտրում: Ահա այս խեղժութիւնների ժամանակ հայ նախարարների՝ Ատատ Սորսոռունու, Կորին Ամատունու եւ ուրիշների մէջ դադափար ծաղեցաւ. Հոների օգնութեամբ թօթափել վերջապէս Պարսից ու Յունաց լուծը. «Բռնութեամբ դերկիրդ մեր ի մեզ դարձուցուք» ասում են նրանք. բայց աւելցնում է Սերէոսը՝ «քակտեցան խորհուրդք միաբանութեան ոչ հաւատալով միմեանց»: Այս դէպքերը տեղի ունեցան 592 թուին. չորս տարի վերջը 596 թուին նոյն խորհուրդը կրկին ծաղեցաւ, բայց նախարարների երկպառակութեան պատճառով աղատութեան դադափարը գլուխ չեկաւ եւ միայն հայ երկրի աւերման պատճառ դարձաւ:

601 թուին չարագործ Մուրիկիոսը սպանուեցաւ, նրա մահն իսկ հայ ժողովրդի համար պատիժ դարձաւ: Սոսրով Ապրուէզ իր բարերարի մահուն վրէժխնդիր եղաւ եւ Պարսից եւ Յունաց մէջ պատերազմը սոսկալիորէն նորոգուեցաւ: Դուինը աւերուեցաւ, հայրապետանոցի մայր եկեղեցին այրուեցաւ,

եւ հայ երկիրը Հայի արիւնով ներկուեցաւ: Այս դժբախտութեան ժամանակ ծերունի Մովսէս կաթողիկոսն էլ վախճանեցաւ եւ հայրապետութիւնը մի քանի տարի առանց դահակալի մնաց: Ահա այս ժամանակ 604 թուին Սորսոռունեաց Մովսէս եպիսկոպոսը իր յայտնի Ողբը գրեց, որի վրայ պէտք է երկարօրէն կանգ առնենք:

12. Որ Ողբը Սորենացու գրուածքն է, այդ անտարակուսելի է: Ոչ միայն ընդհանուր լեզուական նմանութիւնը, այլ եւ Ողբի ու Պատմութեան ի. դր. գլխի համեմատութիւնն այս կարծիքն են հաստատում: Բայց որ Ողբը Պատմութեան վերջարանն է կազմած, չատ տարակուսական է: Նա իր բովանդակութեամբ պատշաճաւոր չէ այն ժամանակաշրջանին, որով Սորենացին իր Պատմութիւնն է փակում. այս կէտի մէջ Հ. Ն. Ակինեանի դիտողութիւնը իրաւացի է: Ողբը հայ ազգի եկեղեցական, քաղաքական ու բարոյական ծանր ճգնաժամն է պատկերացնում եւ գրուած է 604 թուին՝ Պատմութեան գրութիւնից (610-620) մի քանի տարով առաջ: Եւ ապագային, երբ Սորենացու Պատմութիւնը հանրածանօթ դարձաւ, մօտաւորապէս 150 տարիներ վերջը, Ողբը՝ իբրեւ անկախ գրութիւն, մի անձարակ գրագէտի ձեռքով Պատմութեան կցուեցաւ՝ առանց երբեք երկու գրուածքների ներքին իմաստին թափանցելու, բուն վերջարանի փոխարէն, որ էր Տաղ չափաւ յինքն եւ ի Սահակ Բագրատունի» (1): Որ Ողբը սկզբնապէս անկախ գրութիւն է եղած՝ հաւաստիք կարող է լինել

(1) Խորենացույ մատենագրութեանց հատորին մէջ որ Վենետիկ տպուած է 1863ին, Պատմութեան երրորդ գրքի ցանկին ներքեւ կայ սա ծանօթագրութիւնը. «Յերկուս օրինակս որ ունին զցանկս գլխոց՝ ի կատարածիս, կայ եւ գրուիս այսպիսի՝ «Տաղք չափաւ յինքն եւ ի Սահակ Բագրատունի», այլ ի կարգին չբեւի եւ ոչ ի մին ի հինգ օրինակացն»: Իսկ Արեղեան իր հրատարակութեան մէջ, Գ. գրքին ցանկին ներքեւ Վենետիկ այս ծանօթագրութիւնն արտապաժ է, անոր կցելով հետեւեալը. «Խ. (ձեռագրախումբը) վերջում (ցանկի վերջը) ունի՝ Տաղք չափաւ յինքն եւ ի Սահակ Բագրատունի»: Դժբաղդաբար Խորենացույ Պատմութեան այս քանկագին տաղաչափեալ յիշատակարանը մեզի հասած ձեռագիրներէն եւ ոչ մէկուն մէջ դեռ չէ գտնուած:

(Ծ. Խմբ.)

այն պարագան, որ 1. Սորենացու Պատմութեան ձեռագրերից ոմանց մէջ նա՝ իրրեւ վերջարան, իսպառ պահատում է. 2. որ անկախօրէն Յայտնաւորքների մէջ է գտնուում առանց շեշտելու թէ Սորենացու Պատմութիւնից է առնուած, ինչպէս սովորաբար այդպիսի դէպքերում է գրուում, այլ միայն թէ «Ասացեալ մեծին Մովսիսի քերթողի»:

Ողբի կցումը Պատմութեան հետ հաւանօրէն կատարուած է Լ. դարում: Մեր պատմիչներից առաջինը, որ Սորենացու Պատմութեան ծանօթ է, Սերէոս եպիսկոպոսն է (*): Թէեւ սա ոճական փոխառութիւններ Սորենացու Պատմութիւնից ունի — «Զիմն ասեմ առաւորելո, վիպասանութիւն, չարագրելով ասացից» եւլն., բայց Ողբի մասին որ եւ է ակնարկ չունի: Բայց Լ. դարի վերջերը, 790 թուերին Ղեւոնդ երէցն է հրատարակ գալիս, զգուշաւոր, մեղմ, Սորենացուց տարբեր խառնուածքով անձնաւորութիւն, որ ինչպէս Եղիշէի գըրուածքից է ոճական փոխառութիւններ կատարում, նոյնպէս նաեւ Սորենացու Ողբից ու Պատմութիւնից, եւ այս նմանութիւնները Հ. Ակինեան ի մի է հաւաքած: Այս 790 թուականից առաջ է կատարուած Սորենացու Ողբի ու Պատմութեան միացումը, եւ բանաբաղը ոչ թէ Սորենացին, այլ Ղեւոնդ երէցն է հանդիսանում:

Ողբի ընդհանուր սքեման Գր. Նաղիանդացու «Ի Մեխողոս» ողբի կերպով է հաստատուած, որի հետ էլ բաւական շատ նմանութիւններ ունի: Նաղիանդացու գործերի հայացումը, ինչպէս «Կնիք Հաւատոյ» ժողովածուից կարելի է հաւատարմել, Զ. դարու վերջերն է կատարուել եւ կանխենք ասելու, որ ինչպէս Նաղիանդացու, նոյնպէս եւ Փիլոնի, Նիւսացու եւ ... Հռովմի եպիսկոպոսի գործերի թարգմանիչը ուրիշ մէկը չէ, եթէ ոչ Սորենացին, որ կատարել է տակաւին Աղեքսանդրիայի մէջ, ինչպէս եւ Հռովմում գուցէ իր ընկերակիցների, մասնաւորապէս Եղիշէի մասնակցութեամբ: Բառերի դասաւորութեան ու համաձայնութեան, նախադասութիւնների կազմութեան ակնբախ նմանութիւններն այս

կարծիքն աներկբայ են կացուցանում: Ուսանողութեան ժամանակ նա թարգմանել է նաեւ Նաղիանդացու գրուածների հետ սերտ կապակցութիւն ունեցող մի ուրիշ աշխատութիւն, այն է՝ Նոննոսի «Մեկնութիւն Առասպելեաց» դիրքը, որից իր Պատմութեան մէջ մեծապէս օգտուած է: 565 թուականից յետոյ, երբ պէտք էր թեմ կառավարել եւ վերջը ծագած խռովութիւնների ժամանակ, Սորենացին դժուար թէ ժամանակ ունենար այսպիսի թարգմանութիւններով պարասելու, որի համար կեանքի խաղաղութիւն էր պէտք, ինչպէս Պիտոյից Գրքի մէջ ասում է:

Այսպիսի անհրաժեշտ շեղումներից յետոյ՝ անցնենք Ողբի բովանդակութեան, բայց դարձեալ մի քանի խօսք: Ողբի մէջ Հ. Ն. Ա. կինեանը Լ. դարի արաբական խժդժութիւնների, նրանց ծանր հարկապահանջութեան նկարագիրն է ուղում տեսնել եւ Ողբի գրութեան ժամանակը տանում հասցնում է Հարուն էլ Ռաշիտի օրերը, 790 թուականներ: Զուր աշխատանք եւ միայն կանխակալ կարծիքի արգասիք: Ինչո՞ւ չտեսնել այստեղ քաղկեդոնիկ Մաւրիկիոսի կատարած սոսկալի չարիքները հայ քրիստոնեայ ժողովրդի գլխին, եւ այն՝ յանուն քաղկեդոնականութեան: Ողբը հայ ժողովրդի կեանքի թշուառութեան նկարագիրն է 590 թուականից յետոյ, ինչպէս այժմ կը տեսնենք:

Սորիսոսունեաց Մովսէս եպիսկոպոսը, որին ի վաղուց անտի սիրելի էր իր հայրենիքի պատմութիւնը (Ա. ա.), որ զիտէր իր հայրենիքի քաջ ու արգասաւոր կեանքը, նրա փառապանք ու քաջանուն նախարարութիւնը, որ ճանաչում էր Հայի անկախ կեանքն ու հոյակապ թագաւորները՝ Տիգրաններ, Արտաշէսներ, Լուսաւարչի տոհմի փառաւոր քահանայութիւնը եւ հայրենի գրական կեանքի բարգաւաճումը, Զ. դարի դժոխային անցքերի տակ այդ բոլորը յիշելով՝ բարձրաձայն ողբում է. «Ողբամ զքեզ, Հայոց աշխարհ, ողբամ զքեզ՝ հանուրց հիսիսականաց վեհագոյն, զի բարձաւ թագաւոր եւ քահանայ, խորհրդական եւ ուսուցող» (Մովսէս կաթողիկոսի մահումը): Եւ խօսքը դարձնելով Զ. դարի վերջերը կատարուած դէպքերին՝ շարունակում է. «Վրդովեցաւ խաղաղութիւն, արմատացաւ անկարգութիւն, զրդուեցաւ ուղղափառութիւն, կայիայեցաւ ազիսութեամբ չարափառութիւն»: Եւ արդարեւ՝ Յունաց ու Պարսից միջեւ ծագած պատերազմների

(*) Այս պատմիչի ընտիր գործը դժբախտաբար երեք անգամ էլ չափազանց սխալաշատ է տպագրուած, քերքերի ու հատումների տեղափոխութեամբ նա շատ շատ է աղաւաղուած, լեզուական սխալներ խիստ շատ կարօտ է նոր, խնամուած հրատարակութեան:

եւ յոյն վատթար քաղաքականութեան պատճառով հայ երկրի խաղաղութիւնը վրդովուեցաւ, անկարգութիւնը եկեղեցականների ու աշխարհականների մէջ զօրացաւ եւ քաղկեդոնիկ Մաւրիկիոսի ձեռքով Սիւնականի կաթողիկոսացմամբ (594) շարափառութիւնը մեր երկրի մէջ հաստատուեցաւ: Նա շարունակում է. «Ողորմի՛մ քեզ, եկեղեցի Հայաստանեայց, խրթնացեալ ի բարեկարգութենէ բեմին, ի քաջէն զրկեալ հովուէ եւ հովուակցէ»: Խօսքը թէ՛ ներթափան եւ թէ՛ բարոյական բարեկարգութեան խրթնացման մասին է: Յայտնի է որ պատերազմների ժամանակ Դուինի մայր եկեղեցու բոլոր դարպերն ու հարստութիւնը կարին փոխադրուեցան իբրեւ առաւել ապահով տեղ. բայց ապա այդ հարստութեան քաղկեդոնիկ Սիւնականը տէր դարձաւ: Այստեղ յիշուած քաջ հովուին ու հովուակցին էլ ո՛չ Սահակ Պարթեւն է եւ ո՛չ Մեսրոպ Մաշտոցը, ինչպէս սխալմամբ սովորաբար հասկանում են, այլ նոյն Եղուարդեցի Մովսէս կաթողիկոսը եւ նրա հովուակից Մամիկոնէից Աբրահամ եպիսկոպոսը: Մովսէս կաթողիկոսը Մաւրիկիոսի հրապոյններից երբեք չխաբուեցաւ, հայրենի եկեղեցու դաւանութեանը չզաւաճանեց, այլ կայսեր հրաւերին հանդէպ քաջաբար գոչեց. «Ինձ քաւ լիցի ընդ Ազատ գետն անցանել, զթխեալն ի փռան ուտել եւ ի ջերմոյ արբենալ»:

«Ոչ եւս տեսնեմ զբանաւոր հօտ քո ի վայրի դալարւոյ ... այլ ցրուեալս անապատաց եւ դահաւթութեանց»: Այս խօսքերով ողբասաց Մովսէսը հայ եկեղեցու այն անտէրունջ վիճակն է ներկայացնում, որ նա Եղուարդեցու մահուանից յետոյ ունեցաւ (604): Այս դառն ժամանակի համեմատութեամբ աւելի երանելի էր նախկին ժամանակը. «Երանի առաջնոյ եւ երկրորդի փոփոխման, զի էր ինչ ժամանակ հեռանալոյ փեսային եւ փեսաւիրին, եւ (բայց) հարսնդ համբերեցեր ողջախոհութեամբ դամուսնութիւն պահելով: Դարձեալ՝ մինչ երբեմն ոմն սիղեխարար յանդգնեալ յարձակեցաւ յանարատ առաջաւորդ, եւ (բայց) հարսնդ ոչ աղտեղեցար. թէպէտ եւ բռնութիւնն զփեսայն ի բաց վարեաց, որդւոց բարձրացելոց անարգելով զծնողն, համայն եւ խորթոցն՝ ըստ արժանեացն զօտար հայրն եւ յեկամուտ յօրայն ընդունելով, ստկայն դու եւ ոչ յայնմ զքեզ ամայի բոլորիցն

ցուցեր՝ զանդրէն քոյոցն(*) յուսալով դարձ. հովուակցան ոչ որպէս տալգերբ, այլ իբր նոյնադաւակ զուգահարբ զմանկունսդ փայլփայլեցեր: Իսկ յերրորդ հեռանալոյ ոչ է ակնկալութիւն դարձի լուծեալ ի մարմնոյս ընկերան եւ գործակցան ... անհոգող դու այրութեամբ (մնացեր) եւ եղկելիք մեք, որ զրկեցաք ի հայրենի վերակացութենէ»:

Պարզեօք այս հատուածի իմաստը, որ այնքան թիւրիմացութիւնների առիթ է տուած եւ որ լի է ժամանակակից դէպքերի խուլ ակնարկութեամբ: Ողբասացը՝ խօսում է հայ եկեղեցու բերանով, որի կեանքի մէջ երեք փոփոխումներ են կատարուած, բայց տարբեր հետեւանքներով: Այդ փոփոխումներից առաջինը 572 թուի ապստամբութեան անյաջող ելքից յետոյ կատարուեցաւ, երբ Յովհան Գարեղէն ու հաւանօրէն նրան գործակից Մամիկոնէից Աբրահամ եպիսկոպոսը, հայ եկեղեցու «փեսան ու փեսաւէրը», Բիւղանդիոն փախան եւ օգնութիւն գանելու ակնկալութեամբ Յովհան կաթողիկոսը յոյն եկեղեցու հետ հաղորդուեցաւ: Բայց հայ եկեղեցու լրութիւնը ամէն մէկ մերձեցում մերժեց ու անարատ մնաց. «Բայց հարսնդ համբերեցեր՝ ողջախոհութեամբ զամուսնութիւն պահելով»: Երկրորդ փոփոխումը 590-594 թուերին տեղի ունեցաւ, երբ ոմն (Մաւրիկիոս կայսրը) հայ եկեղեցու դաւանութիւնն աշխատեց աղտեղել Քաղկեդոնի քարոզութեամբ. բայց դու Հայ եկեղեցի, դարձեալ անարատ մնացիր. «բայց հարսնդ ոչ աղտեղեցար»: Այն ժամանակ Մօրիկը բռնութեամբ «զիւեսայն ի բաց վարեաց» - Մովսէսի կաթողիկոսութիւնը մերժեց եւ նրա փոխարէն Սիւնականին հայրապետ կարգեց յոյն բաժնի վրայ, եւ յունաբաժին Հայերից շատերը իրենց ծնող Եղուարդեցու դէմ բմբուսացան, ինչպէս խորթ, ի վաղուց անտի հռոմացած հայ զաւակները՝ իրենց ունեցած արժանիքի համեմատ օտար հօրն, այսինքն Սիւնականին ու նրա գործակից կարինի թէոգորոս եպիսկոպոսին ընդունելով: Բայց դու, Հայոց եկեղեցի, ասում է Սորենացին, այսպիսի ծանր պայմանների մէջ էլ քեզ ամայի ցոյց չտուիր՝ միշտ յուսալով քուկիներէրիդ, քեզից բաժանուած զաւակներիդ դարձը (որ իրօք մի քանի

(*) Խորեմացու բոլոր տպագրութիւնների մէջ (Արեղնանի հրատարակութիւնը չեմ տեսած) «ֆոյոյն» է, բայց իմաստը պահանջում է «ֆոյոյն» դնել:

տարի վերջը կատարուեցաւ) եւ հովուակցի, ոչ տագրի, այլ իրբեւ իսկական հօր ձեռքով (Մամիկոնէից Արբաճամ եպիսկոպոսի ձեռքով) մանուկներէ դաշտայեցիք Յունաց բաժնի մէջ)։ Երբորդ փոփոխումը քեզ համար, Հայ եկեղեցի, աւելի վատթար եղաւ, որովհետեւ քո փեսան՝ Մովսէս կաթողիկոսը՝ Պարսից բաժնի մէջ մեռաւ, իսկ նրա գործակից Արբաճամ Մամիկոնեանը՝ Յունաց բաժնի մէջ, ուր 560 թուերից իրբեւ վիճակաւոր եպիսկոպոս եւ տեղապահ գործում էր։ Դու, Հայ եկեղեցի, առանց հոգացողի մնացիր իրբեւ այրի, իսկ մենք՝ իսկզճ, որ հայրենի վերակացութիւնից զրկուեցանք։

Այսպիսի լուսարանութեամբ Ողբի այս հատուածը Զ. դարի կատարեալ պատկերն է ներկայացնում որոշ փաստերի ակնարկութեամբ, եւ միանգամայն շատ մութ կոտորներ են պարզում։

Շարունակենք։ Ողբասացը, համեմատելով հայ ազգի կրած տառապանքները հրէական ազգի թշուառութիւնների հետ, մերը աւելի է գտնում, որովհետեւ մենք գործիչներ չունենք։ «Անտիոքոս (Մաւրիկիոս) բռնադատէ թողուլ զօրէնս հայրենիս, եւ (բայց) Մակարէ ոչ փրկէ. այժմ մարտք ի ներքուստ եւ արհաւիրք արտաքուստ. մարտք ի հերձուածողաց եւ արհաւիրք ի հեթանոսաց»։ Այս տողերի մէջ ոչ միայն իր ժամանակի կրօնական ներքին կոխիւններն է ներկայացնում, այլ եւ Ապրուէղի պատերազմները Հայաստանի մէջ իր բարերար Մաւրիկիոսի սղանման համար։ «Եւ խորհրդականն չէ ի միջի (Եղուարդեցին), որ խրատէր եւ յարմարէր ի պատերազմ» (ընդգէմ հերձուածողաց)։ Այս խորհրդականի յիշատակութեան առթիւ՝ նա դարձնում է խօսքը իր անձնական վշտերն արտայայտելու։ Յիշում է, որ Դուինի 559 թուի ժողովական հայրերը — Ռշտունեաց Սահակ, Խորխոռունեաց Մաշտոց, Եղուարդեցի Մովսէս եւ ուրիշները — «ծնան զիս իւրեանց վարդապետութեամբ եւ ուսուցին՝ առ այլս առաքելով աճեցուցանել. եւ մինչ նոքա զմերն յուսային դարձ եւ պատուասիրել իմով ամենիմաստ արուեստիս եւ կատարելագոյն յարմարութեամբս համայն եւ մեք (աշակերտքս) փութապէս զիմեալք ի Բիւզանդիոյ յուսայաք հարսանեաց պարել՝ անվեհեր երազութեամբ կրթութեալք, եւ առաքատի ասել երգս, արդ փոփանակ խրախճանութեանն ի վերայ դերեղմանի (նոցա) ողբս ասելով հառաչեմ, ուր եւ

ոչ տեսութեանն ժամանեցի աշաց նոցա կափուցմանց եւ լսել զվերջին բարբառն եւ զօրհնութիւնն»։ Ասել ենք, որ Խորենացու եւ իր ընկերների վերադարձից առաջ արդէն Սահակ Ռշտունին 560 թուերին, Մաշտոց Խորխոռունին 565 թուերին վախճանած էին. իսկ 604 թուին, երբ Խորենացին Դուինից հեռու Յունաց բաժնի մէջ էր գտնուում, Եղուարդեցին վախճանեցաւ։ Առանձնապէս խօսքը դարձնելով նորոգ հանդուցեալին՝ նա թուում է նրա հոգեկան բարեմասնութիւնները, եւ այն պաշտպանութիւնը, որ նա ցոյց էր տուած «Առ բարի աշակերտաց հանդիպումս» հաւաքելով նրանց Հայոց հայրապետանոցի մէջ, լինելով «Ժողովող, նաւահանդիստ, օգնական եւ խրախուսիչ»։ Ինչպէս ասել ենք, 574 թուին Եղուարդեցին կաթողիկոս դառնալով՝ Մովսէս քերթողին աւելի բարձրացրեց՝ Խորխոռունեաց եպիսկոպոս ձեռնադրելով։ Այս է ազնարկում ողբասացն ասելով. «Վերացաւ ի գլխոյս փարթամացուցիչ պսակն զեղեցիկ եւ կենցաղօգուտ»։

Այս Ողբի մէջ ինձ համար պարզ չեն միմիայն հետեւեալ տողերը. «Զհէ՞քն իմ մանուկ եւ թագաւոր, զխորհրդակցութեամբ վատթար՝ ազգաւ ի բաց ընկեցիկն եւ նախ քան զմահ մեռելութիւն անփառութեամբ՝ յաթոռոյն ի վայր կործանեալ, եթէ զիս ինքն (արտասուեցից)»։ Այստեղ համեմատութեան եղրներն անպատշաճ են. որի՞ն սղբամ, ի՞նձ թէ իմ մանուկ թագաւորին։ Որ Զ. դարում հայ Արշակունիներ կային, այդ անտարակոյս է. Սեբէոսը է. դարում յիշում է ասելով. «Եւ նմա կին ի տանէն Արշակունեաց» (Եր. 188)։ Գուցէ թէ այս Ողբի գրութեան ժամանակները՝ հայ թագաւորական թագի թեկնածու մի ոմն պատանի է եղած, եւ Խորենացու խօսքը ակնարկութիւն է այդ Արշակունու մասին։

Այնուհետեւ ողբասացը հայ ժողովրդի ամբողջական կեանքն է պատկերացնում է. դարի սկզբներում. «Վարդապետք տխմարք եւ ընդինքնահաճք... նախանձոտք... զայլք եղեալ զիւրեանց հօտս զիշատելով (զիշատող)»։ Արդէն ասել ենք, որ երկու տիպարի վարդապետներ կային Հայաստանում՝ Աղեքսանդրեան ու Բիւզանդական դպրոցների մէջ ուսած. մինչդեռ առաջիններն ամենաջերմ պաշտպան են հանդիսանում հայ եկեղեցու վարդապետութեանց, վերջիններն աւելի ճկուն են, աւելի Յունաց համակերպող, որոնց օրինակ կարող է լինել Կոմիտաս կաթողիկոսի եղբորորդին Թէո-

գործոս, որ Եզրի միութեան մէջ շատ տխուր դեր խաղաց: Ահա այս տխուր վարդապետների համար է անշուշտ խորհնացու խօսքը, որոնք արհամարհոտ մեծամտութեամբ վարւում էին խորհնացու եւ իր ընկերների հետ:

«Վիճակաւորք հպարտք... ծոյլք, ատեցողք արուեստից... սիրողք վաճառուց եւ կատակերգութեանց»: Ոչ ամէն վիճակաւոր եպիսկոպոս Մամիկոնէից, Ամատունեաց, խորխորունեաց եպիսկոպոսների նման էր. Հայաստանի բազմաթիւ եպիսկոպոսներից, մանաւանդ Յունաց բաժնից կային այնպիսիներ, որոնք խորհնացու խօսքը լիովին արդարացնում էին՝ դիտութիւններ ատող, վաճառք եւ զբօսանքներ սիրող: Տակաւին Դուինի 553 թ. բարեկարգչական կանոնները կուում են ահա տոկոսներով փող բաժնող, եկեղեցական պաշտամունքների մէջ անփոյթ դտնուող, որսորդութեամբ ու վաճառականութեամբ պարսպող եկեղեցականների դէմ:

«Ժողովրդականք վէսք, ստահակք, մեծախօսք, անվաստակք, վնասակարք, փախչողք ի ժառանգութենէ»: Ի՞նչպիսի սիրուն պատկեր քաղաքացու կեանքի, որ սնուած էր Պաղիկեանների քարոզութեամբ: Սրանք 555 թուերից առաջ արդէն քարոզում էին, թէ եկեղեցու խորհուրդներն ոչինչ են, թէ խաչի երկրպագութիւնն աւելորդ է, թէ ո՛չ մեղք կայ եւ ո՛չ էլ մեղքի համար պատիժ: Այս ու այլ այսպիսի գաղափարների ազդեցութեան տակ մարդիկ պիտի լինէին վէս, անհնապանդ, աշխատանք ատեցող, ձրիակերներ, «փախչողք ի ժառանգութենէ», որովհետեւ ժառանգութեան հետ աշխատանքի գաղափարն է կապուած. իսկ սրանք ընդհակառակն ձգտում էին «տէրերին ծառայ դարձնել եւ նրանց փոխարէն ահապարանոց ձերսով շրջել»:

«Զօրականք անարիք, ստապարծք, պղերդք, հեշտասէրք եւ կողոպտիչք»: Իր Պիտոյից Գրքի մէջ խորհնացին զօրականի հրապուրիչ պատկերն է դժադրած. գովում է նրանց սքանչելի կերպարանքը, նրանց ողջախոհութիւնը, նրանց արիական ոգին, որ հայրենի դաւաճն ու մարդկութեան խաղաղութիւնն է պաշտպանում. նրանք հարուստ են ո՛չ թէ կողոպտելով, այլ իրենց ստացուածքն ամբողջ պահելով ու աւարարածին ստանալով. իսկ ա՛յժմ, բոլորովին այս պատկերին հակառակ՝ «Զօրականք անարիք... հեշտասէրք... կողոպտիչք...»:

«Իշխանք ապստամբք, զոգակիցք գողոց... յափշտակիչք, աշխարհաւերք, աղտեղասէրք»:

Այս տողերի հանդէպ Հ. Ակինեանը իր գարմանքն է յայտնում, երբ միւս կողմից տեսնում է, որ «մեծազգի իշխան մը» պատմութեան մեկենաս է հանդիսանում: Զո՛ւր գարմանք: Եթէ Հայաստանի մէջ բարձր արժանիքի տէր նախարարներ կային, ո՞րքան շատ էր եւ «աշխարհաւեր, ապստամբ» նախարարների տեղը: Միթէ ապստամբ չէ՞ր Սիւնեաց Վահան իշխանը, որ 570 թուերին «ապստամբեալ ի բաց եկաց ի Հայոց... դի մի՛ եւս կոչեցի անուն Հայոց ի վերայ նորա»: 590 թուերին Սիւնեաց տէր Փիլիպպոսը երկու անգամ իր հայ արենակիցների դէմ դուրս եկաւ եւ աւերմունքի պատճառ դարձաւ: 600 թուերին Սիւնեցի Սահակ իշխանը եւ նրա հետ ուրիշները ամբաստանեցին Ստեփաննոս Սիւնեցին, որ ապստամբ է եւ Հայութեան լրութեան հետ միացած, ու նրան զլխատել տրւին: Այս բոլորը խորհնացու աչքի առաջ կատարուած, եւ նա իրաւունք չունի՞ վերոյիշեալ յանդիմանական խօսքերն ասելու: Ո՞րքան այս տխուր մանր նախարարներ են եղած Հայաստանում, որոնք իրար երկիր յափշտակելով ու աւերելով են զբաղուած եղել...:

«Դատաւորք տմարդիք... անընարողք իրաւանց»: խորհնացին, որ հայ հայրապետանոցի դատաւորի պաշտօն էր վարում, բնականաբար այստեղ Հայաստանի աշխարհիկ դատաւորներն ի նկատի ունի:

խորհնացին իրրեւ եկեղեցական մտածող կարծում է, թէ այս բոլոր չարիքների հետեւանք «Աստուածառաք իսկ ամենեցուն եկեալ հասանէ բարկութիւն» (Պիտոյից Գիրք). եւ նա առանց յատկապէս ցոյց տալու, թէ յաջորդ յիշատակած երեւոյթներն իսկապէս կատարուած են, շարունակում է. «Եւ ապա յանդիմանութիւն այսոցիկ զի՞նչ, եթէ ոչ անտես առնել Աստուծոյ, եւ տարերց փոփոխել զընութիւն. դարուն երաշտացեալ, ամառն անձրեւայոյզ, աշուն ձմեռնացեալ, ձմեռն սաստկասառոյց: Հողմք բքարարք, խորշակարբք, ամպք հրընկէցք, կարկտածութիւն, անձրեւք անժամանակք եւ անպիտանք, օդք դառնաշունչք եւ եղեմնարկութիւն: Զրոցն առաւելուին անօգուտ եւ նուազելն անհնարաւոր: Երկրի անբերութիւնք պտղոց եւ անաճելութիւնք կենդանեաց: Այլ եւ սասանմունք եւ դըրդմունք»: խորհնացու այս ընդհանուր խօսքերով յիշատակած պատուհասների մէջ՝ Հ. Ն. Ակինեան Ասորական տարեգրի 770 թուականի մէջ պատահած բնական երեւոյթներն է տեսնում եւ իսկոյն Ոգրի գրութեան ժամանակն է որոշում, թէ գրուած է 770 թուից

յետոյ: Յանձնարարում ենք Հ. Ակինեանին՝ կանխագոյն տարեգրութիւնների մէջ էլ նման գէպերի նկարագրութիւններ որոնել, գուցէ այն ժամանակ Ողբի գրութեան տարեթիւն աւելի կանոնա նշանակէ: Ապաքէն այդպիսի բնութեան երեւոյթներ ամէն տեղ, ամէն բոլոր, առանց կանխորոշման կարող են կատարուել եւ կատարուեմ են. նրանք աստեղաբաշխական տրւեալներ չեն, որ մեզ ծառայեն որ եւ է երեւոյթի ժամանակը ճշդելու:

Ողբի վերջին հատուածը Զ. դարի հայ ժողովրդի ու ազատանինների քաջած թշուառութիւնների ճշգրիտ նկարագիրն է: «Թագաւորք տիրեալք (Ապրուէզ եւ Մօրիկ) խիստք եւ չարաչարք, բեռննս բառնալով ծանունս եւ դժուարակիրս, հրամանս տալով անտանելիս: Վերակացուք անհարթարք, անողորմք... հաւատ վաճառեալ ընդ սնոտի կենցաղոյս: Հէնք (Հ. Ակինեանը այս բառով Զինկաններ, ծայթեր հասկանալով Ողբի գրութեան ժամանակն ուղում է աւելի ուշացնել) եկեալ անհատք ի յոյովից կողմանց: Գերփումն տանց եւ յափշտակութիւն արարոց. կապումն գլխաւորաց եւ բանտք յայտնեաց. յօտարութիւն վարումն ազատաց եւ անթիւ նեղութիւնք ռամկաց. առումն քաղաքաց եւ քանդումն ամրացաց. աւերումն աւանաց եւ հրդեհումն շինուածոց. սովք անբաւք եւ հիւանդութիւնք եւ մահք բազմօրինակք»:

Այս տխուր նկարագրի փաստերը կարելի է գտնել մեր է. դարի ընտիր պատմիչ Սեբէոս եպիսկոպոսի մօտ. եւ Ողբի մասին այսչափ:

13. Զ. դարի հայ եկեղեցու կնճռոտ խնդիրներից մէկն էլ Վրաց եկեղեցու անջատման հարցն էր: Խորենացին իր Պատմութեան մէջ ցոյց է տալիս Վրաց եկեղեցու հաստատման հանգամանքներն ու նրա կապակցութիւնը հայ եկեղեցու հետ: Այս կապակցութիւնը, Խորենացուց առաջ՝ շեշտուած է նաեւ Աբրահամ կաթողիկոսի թղթերից մէկում, որքան յիշում եմ:

Խորենացին Վրաց դարձի Պատմութեան աղբիւր Ագաթանգեղոսն է ցոյց տալիս, բայց նա օգտուել է անշուշտ եւ Սոկրատ Սքոլաստիկոսի «Եկեղեցական Պատմութիւնից» մտցնելով նրա մէջ տեղական աւանդութիւնների հիման վրայ մանր փոփոխութիւններ, ինչպէս քարոզչուհու անունը — «Կին ոմն՝ անուն Նունէ, յընկերաց Ս. Հովսիփեանց, եւլն»: Սոկրատը կրկին թարգմանութեամբ ունինք՝ սովորաբար մեծ ու փոքր կոչուած: Առաջինը՝ յունարան թարգմանութիւնը՝ կատարուել է Փիլոն Տի-

րակացու ձեռքով 696 թ. օտարութեան մէջ եւ որը ներկայ յոյն բնագրի հետ աւելի համաձայն է. իսկ երկրորդը՝ փոքր կոչուածը, մանր յաւելումներով ու կրճատումներով, 696 թրւականի թարգմանութիւնից գրեթէ հարիւր տարիներ առաջ է կատարուած եւ որը Սեբէոսն էլ է կարդացած (էջ 16) եւ թարգմանութիւնը նուիրուած է եկեղեցեաց շինող Ներսէս ապի-հիւպատ պատրիկին: Այս թարգմանութիւնը կատարուել է 570 թուականներին եւ թարգմանիչը ուրիշ ոք չէ, եթէ ոչ Մովսէս Խորենացին, որին սիրելի էր եւ սովորութեան համեմատ պատմական գործերով զբաղուելն ու թարգմանելը: Պատմական փաստերի ճշգրիտ ըմբռնողութեան համար հարկ կայ երեք Ներսէս կամսարական ընդունելու: Առաջին Ներսէս կամսարականին Փարպեցին է յիշում, որ 485 թրւերին Շիրակի տանուտէրութիւնը ստացաւ եւ հաւանօրէն 530 թուերին էլ վախճանեցաւ 70-75 տարեկան հասակում, եթէ ընդունինք, որ տանուտէր եղած ժամանակ 25-30 տարեկան կրտսեր էր: Երկրորդ Ներսէս կամսարականը, փոքր Սոկրատի յիշատակարանի համեմատ «Ապիհիւպատ պատրիկ եւ եկեղեցեաց շինող» կոչուածը, իմ կարծիքով նոյնպէս ապրում էր Զ. դարի կէսերից մինչեւ է. դարի սկզբնական թուականները: Այս Ներսէսը գուցէ նոյն անձնաւորութիւնը լինի Ներսէս ստրատելատի կամ զօրավարի հետ, որ Դարա քաղաքի առումից յետոյ (605 թ.) Յունաց ձեռքով Պոլսի մէջ ըսպանուեցաւ (Սեբ. 115): Երրորդ Ներսէս կամսարականը հաւանօրէն է. դարի սկզբներում է ծնուած եւ ապրել է մինչեւ 694 թուերը: Սա յիշում է իբրեւ «Տանուտէր Շիրակայ եւ Արշարունեաց» Նախճաւանի, Մրենի եկեղեցիների արձանագրութիւնների մէջ՝ առանց երբեք յիշատակուելու թէ եկեղեցիներ է շինել: Սա Գրիգոր Արշարունեաց եպիսկոպոսի «Մեկնութիւն ընթերցուածոց» գրքի մեկեկնասն է եղած. 690 թուին պատրիկ է նշանակուած եւ 694 թրւին էլ վախճանած: Պարզ է, որ փոքր Սոկրատը կարող էր թարգմանուած լինել երկրորդ Ներսէս իշխանի հաճութեամբ, որ Թալինի Ս. Աստուածածին եկեղեցին էր շինած: Եկեղեցու շինութեան մինչեւ ցարդ մնացած արձանագրութիւնը թուական չունի, որովհետեւ շինութիւնը կատարուել է հայ թուականի վերջնական հաստատութիւնից՝ 574 թուից՝ առաջ:

Սոկրատի թարգմանութեան հետ կապուած է եւ «Սեղրեստրոսի Վարք» թարգմանութեան խնդիրը, որ Խորենացու կեանքի ժամանակի ո-

բողման նկատմամբ այնքան մեծ աղմուկ հանեց: «Սեղբեստրոսի Վարք»-ի հեղինարան թարգմանութեան մէջ («Վարք»-ի միւս թարգմանութիւնը յետոյ է կատարուած) հետեւեալ ծանօթագրութիւնը կայ. «Յառաջ քան զութումասան ամ ի թարգմանելոյ փիլոնի զգիրս զայդ՝ Սոկրատայ զեկեղեցական Պատմութիւն, թարգմանեալ էր Արասուն Գրիգորի Զորափորեցւոյ թարգմանի (հրամանաւ) ընդ փառաւորս յիշելոյ Ներսէս Վրաց իշխանի փեսային Կամսարականաց զԳիրս Պատմութեան Վարուց սրբոյն Սեղբեստրոսի եպիսկոպոսին Հրոովմայ»: Ասողիկի ցուցմամբ Սոկրատի թարգմանութիւնը փիլոնի ձեռքով կատարուել է 696 թուականին, որից 18 տարի զեղչելով՝ ստանում ենք Սեղբեստրոսի Վարքի թարգմանութեան թուականը — 678. եւ որովհետեւ Սորենացին Մեսրոպի նկարագիրը տալիս է այս թարգմանութեան բառերով, ապա Միաբանի եւ ուրիշների կարծիքով նա 678 թուականից յետոյ է ապրել: Բայց կարծում ենք, որ վերոյիշեալ ընթերցուածի մէջ մի փոքրիկ փոփոխութիւն պէտք է մտնել եւ այնուհետեւ ամէն տեսակ սին կարծիքներ կը ցրուին կ'երթան, Մանօթագրի յիշատակած 18 տարին — «յառաջ քան զութումասան ամ» — մի այնպիսի չնչին ժամանակաշրջան է, որ դժուար թէ ծանօթագրի առանձին ուշադրութեան արժանանար՝ այդ երկու թարգմանութիւններն արտագրելիս: ուստի այդ հատուածն առաջարկում ենք մի այսպիսի յաւելուածով կարգալ՝ «Յառաջ քան զհարիւր եւ զութումասան ամ ի թարգմանելոյ փիլոնի եւլն»։ մի այսպիսի յաւելուածով Սեղբեստրոսի Վարքի թարգմանութեան տարին, այն է՝ 578 ենք ստանում, որ ուրիշ կողմից էլ ճշդուում է:

Ինչպէս յայտնի է, Սեղբեստրոսի Վարքը թարգմանուել է Կամսարականների փեսայ «Վրացի Ներսէս իշխանի» ցանկութեամբ: Այս Ներսէսը անշուշտ ուրիշ մէկը չէ, եթէ ոչ Վերթանէս քերթողի Թղթի մէջ յիշատակուած «Վրացի Ներսէս իշխանը» (Ուխտ. Բ. ԻԲ.): Թարգմանութիւնը պէտք է որ 610 թուականից առաջ, երբ Վրացիք Հայերից վերջնականապէս անջատուեցան, կատարուած լինի, այն է՝ 578 թուական, Կիւրիոնի Արարատի քորեպիսկոպոս կարգուելուց 14 տարի առաջ: 610 թուականներից յետոյ՝ երբ Հայի ու Վրացու մէջ կրօնական կատաղի թշնամութիւն ընկաւ, անկարելի էր, որ վրացի Ներսէս իշխանը Կամսարականների հետ խնամութեամբ կապուէր եւ մի այս-

պիսի գործի հայերէն թարգմանութիւնը Արասի որդի Գրիգոր քերթողին յանձնարարէր կատարելու, որ Կիւրիոն կաթողիկոսին կատաղի թշնամի էր, մինչդեռ ինքը Ներսէս՝ նրա մօտ բարեկամը:

Գրիգոր քերթող «Սեղբեստրոսի Վարք»-ի բնագրի հետ ծանօթացած կարող էր լինել 564-565 թուերին, երբ այս թարգմանը Սորենացու եւ միւս ընկերների հետ Աղեքսանդրիայից հայրենիք վերադառնալիս՝ Հոովմ ընկաւ: Իւր ընկերով Գրիգոր քերթողի 578 թ. կատարած թարգմանութիւնից բնականաբար լիապէս կարող էր օգտուել Սորենացին Մաշտոցի նկարագիրը տալիս իր Պատմութեան մէջ, որ գրուել է 610-620 թուերին:

Ի դէպ տեսնք, որ այս Գրիգոր քերթողի թարգմանութիւններ համարում ենք լեզուական տեսակէտով. 1. Իրենէոսի Յոյգըր եւ 2. Տիմոթէոս Կուզի՝ Հակաճառութիւնքը, զուցէ Աղեքսանդրիայում կատարուած:

14. Հայրապետական Աթոռի պարապութեան ժամանակ, որ 4-5 տարի տեւեց, Սորիոնունեաց ու Ամատունեաց եպիսկոպոսների միակ ջանքն էր Դուինի հետ միանալ եւ հայրապետութեան միութիւնը գլխաւորել:

Սմբատ Վրկան մարզպանի հզօր պաշտպանութեամբ վերջապէս Վրթանէս քերթողին յաջողում է Դուինի ժողովը գումարել եւ Ռչտունեաց Արաւհամ եպիսկոպոսին կաթողիկոս ընտրել: Այս նորընտիր կաթողիկոսին ահա 608 թուին տալիս է Սորիոնունեաց եպիսկոպոսը այն դաւանական Թուղթը, որ Դիրք Թղթոցի մէջ պահուած է — Յերկուց բնութեանց մի բրնութիւն — եւ սրի մասին Յովհան իմաստասէրն էլ յիշատակութիւն է անում:

Հայ եկեղեցու զօրացման ու վերակազմութեան համար Սմբատ մարզպանի ցոյց տուած հզօր պաշտպանութիւնը՝ անհուն բերկրանքով Սորենացու սիրտն է լցնում եւ սա հայ ազգի ապագայ գոյութեան առհաստոյեան Բագրատունեաց առճմի մէջ է տեսնում: Սորենացու համակրանքը դէպ ի Բագրատունիք այստեղից է ծագում:

Արբաւհամ ու Կոմիտաս աշալուրջ կաթողիկոսների ժամանակ, երբ մեր երկրի մէջ փոքր ի շատէ խաղաղութիւն էր տիրում՝ դէթ մինչեւ 622 թուականը, Սորենացին միջոց ունեցաւ ինքնագիր գործերով պարապելու: Մինչեւ այդ ժամանակները նա գրեթէ միմիայն թարգմանութիւններով էր պարապած — «Այր եմ ծերա-

ցեալ եւ հիւանդոս եւ անդարտալ ի թարգմանութեանց» (Գ. ԿԵ.), այժմ ձեռնամուխ է լինում իր նշանաւոր գործերը — Հայոց Պատմութիւնն ու Աշխարհացոյցը — հրատարակ հանելու: Աղեքսանդրիայի մէջ իր ընկերների հետ մեծ տեմպով աշխատելով («անվեհեր երազութեամբ կրթեալք») նա թարգմանել էր. 1. Փիլոն Եբրայեցու՝ վերծառութեան դպրոցի հելլենականոր հիմնադիրներից մէկի՝ գրուածները, որոնք խորապէս ազդել են Պիտոյից Գրքի ու Պատմութեան վրայ: 2. Գրիգոր Նիւսացի. 3. Գրիգոր Նազիրանկացի. 4. Նոննոս՝ Մեկնութիւն առասպելաց: Հայրենիք վերադառնալուց յետոյ թարգմանել կամ գրել է՝ 5. Թրակացու քերականութիւն. 6. Մեկնութիւն քերականին. 7. Պիտոյից Գիրք. 8. Աքոլաստիկոսի՝ Եկեղեցական պատմութիւն. 9. Ողբ եւ 10. Յերկուց բնութեանց:

Այս ժամանակները գրաւոր մտերմութիւն է հաստատուում Խորենացու եւ Սմբատ Բագրատունու երկրորդ որդի Վարազ Սահակի միջեւ (*), որ մի պարսկասէր անձնաւորութիւն էր, ու Պարսից առասպելներին սիրահար: Արդ՝ այս իշխանը, երեւի ծանօթ Խորենացու գրական գործերին ու յատկապէս Ողբին, առաջարկում է գրել Հայոց դիւցազնական պատմութիւնը, ինչպէս որ ճիշդ այդ ժամանակները Խորով Ապրուէզի հրամանով Պարսից դիւցազնական պատմութիւնը գրուելու ձեռնարկուեցաւ: Սըրտի անհուն բերկրանքով Գամեայ Խորենացին յանձն է առնում իշխանի այս ցանկութիւնը կատարելու՝ շնայելով այն բոլոր գծուարութիւններին, որ մի այսպիսի գործ զլուխ բերելու համար նրա առաջ կարող էին գուրս գալ: Ոչ միայն պատմական աղբիւրներ թարգմանուած չէին, կամ մատենադարաններ չկային, («միթէ մատենոն մերձ կայցէ ինձ, կամ դպրութիւնք քոց հայրենեաց»), այլ եւ հէնց հայ աշխարհի ժողովրդական անդիր գրականութիւնը հաւաքուած չէր. բայց Խորենացին յանձն է առնում գրելու, որ Հայերը «ստէպ ստէպ եւ անյազ առնիցեն զրնթեւրցումն պատմութեանց իւրեանց»:

(*) Մանուէլ Բագրատունին երկու որդի ունէր՝ Սմբատ Շում (610 թ.) եւ Գիֆ (Գագիկ) Գաշտիկաբ: Սմբատ Շումի որդիքն էին՝ 1. Վարազ Տիրոց (660), 2. Վարազ Սահակ (638), եւ 3. Սմբատ ասպետ: Վարազ Տիրոցի որդին էր Սմբատ Բագրատունի. Վարազ Սահակինը նոյնպէս Սմբատ Բագրատունի:

Ինչպէս Պիտոյից Գրքի մէջ իմաստութեան եւ գրական գործերով պարապելու միակ պայմանը Խորենացին խաղաղութիւնն է համարում, այսպէս եւ Պատմութիւնը գրելիս՝ նա ցանկանում է, որ չըջապատն անդորր լինի, եւ ոչ թէ վտանգներով ու վրդովմունքներով լի, ինչ որ պատահեցաւ Խորով Ապրուէզի արշաւանքների պատճառով Հայաստան ու Պաղեստին, երբ ոչ միայն Կարին ու Երուսաղէմ առնուեցան, այլ եւ քրիստոնեաների ամենամեծ որբութիւնը — Ս. Խաչը — գերի տարուեցաւ: Այս վտանգների առթիւ է, որ Խորենացին գոչում է. «Եւ սիրելի էր ինձ յայնժամ (առ Պարուրաւ) դալ Փրկչին եւ զիս գնել եւ առ նոքօք յաշխարհ զմուտն իմ լինել եւ նոցա տեսութեամբն խրախճանալ եւ յարդեացս վտանգից ասրել: այլ վաղ ուրեմն փախեալ ի մէնջ պատահումն այն, թէ արդեօք եւ վիճակ» (Ա. ԻԲ.):

Պատմութեան գրութեան ժամանակաշրջանը համարում ենք 609-620 թուականը: Գրութեան ժամանակն աւելի ճշդութեամբ կարող էինք որոշել, եթէ փաստօրէն Խորենացու հետեւեալ տողերը մեզ պարզ լինէին. «Աստ ուրեմն Պարսից թագաւորութեանն, որպէս լըսեմք, յայոց յարուցեալ զունդս եւ Ոստան անուանել» (Բ. Է.): «Վերջեալ» խօսքը ո՞ր ժամանակի ահնարկութիւն է: Թղթոց Գրքից պարզ երևում է, որ 610 թուին արքունի զընդի (Մարդպետական, Մարդաստան) եպիսկոպոսը սեփական զնդի եպիսկոպոս էր կոչում: Նոյն «սեփական» կոչումը Սեբէոսի մէջն էլ երևում է 639 թուերին, բայց միեւնոյն ժամանակ Ոստան զնդի եպիսկոպոս կոչումն էլ երևում է, իսկ 645 թուերից աւելի յաճախ է այս կոչումը գործածւում: Ուրեմն՝ Բ. գրքի գրութեան ժամանակ Խորենացու համար այդ նորօրինակ Ոստան կոչումը հրապարակ է գալիս: Դարձեալ՝ «ի Պարսից առասպելաց» հատուածի մէջ Պարսից համար առում է. «Զի զորոց առեմք զրանս եւ զգործս, այսօր ձեռամբ իմով շարադրեմ զայնոսիկ»: Այս պարսկատեցութիւնը անշուշտ հետեւանք է այն պակուցիչ զէպքին, երբ 614 Ապրուէզի յաղթական զօրքը Երուսաղէմն առաւ ու խաչափայտը գերի վարեց. ապա ուրեմն առաջին զիրքը գրուած էր այդ տողերի գրութեան ժամանակ: Այս դիտողութիւնները կուտան կարող են լինել պատմութեան գրութեան ժամանակն որոշելու նկատմամբ: Պատմութեան գրութեան վերջին թուականը գտնելու համար որոշ փաստ չունինք, բայց բնականաբար պատմութիւն, այն էլ Հա-

յոց պատմութիւն, զերկր բաւական ժամանակ էր պահանջում: Խորենացին Արարացոց Հայաստան արշաւելը, որ 640 թուին կատարուեցաւ, չգիտէ. ապա նա Պատմութիւնը այս ժամանակից առաջ է վերջացրել: Միւս կողմից էլ պարզ երևում է, որ պատմութիւն խնդրող Սահակ Բագրատունին՝ մինչեւ պատմութեան գրութեան վախճանը կենդանի էր (Գ. ԿԵ.), նա վախճանեցաւ 640 թուականից առաջ, որովհետեւ Արծաթից Արարացիները դէմ 640 թուին օգնութիւն տուողը Սահակի որդի Սմբատն է հանդիսանում (Սեր. 189): Եւ որովհետեւ Պատմութիւնից յետոյ Խորենացին ուրիշ աշխատութիւններ եւս կատարել է, ապա պատշաճ է, որ Պատմութեան գրութեան վերջին թուականը 620 թիւը համարենք:

Պատմական դէպքերի ճշգրտութիւնը յայտնի կացուցանելու համար Խորենացին Պրտոյից Գրքի մէջ երկու սկզբունք է առաջ բերում. «Ամենայն իրաց հաստատութիւն երկուք այսոքիւք են որ ունին զհաստատութիւն. նախ որ անուամբ թագաւորացն ուրուք ժամանակաւ, եւ ապա անուանակոչութեամբ տեղեացն, յորս գործեցեալն միշտ նշանաւոր ցուցանիւր»: Նոյն սկզբունքները գործադրում է Պատմութեան դէպքերը ճշգրտելու համար:

Պատմութեան գրութիւնից յետոյ Սահակ Բագրատունու խնդրով Խորենացին գրել է «ի Պարսից առասպելեաց» հատուածը: Նա որ հրմուտ էր յունական պերճ ու ողորկ առասպելներին, նոյնչափ էլ Պարսից «սիծուն» ու «անձունի» առասպելներին, որոնք Սահակ Բագրատունուն սիրելի էին:

15. 620-25 թուերին Խորենացին գրել է Աշխարհացոյցը՝ Պողոտէոսի, Պապ Աղեքսանդրացու եւ Կոնստանդին Անտիոքացու գրութեան հետեւողութեամբ: Այդ գրութեան հայտնաբերումը Սահակի ժամանակ կատարած ցամաքային ու ծովային ճանապարհորդութիւնն առատ նիւթ մատակարարեց այս աշխատութեան համար: Բայց սա շատ փոփոխութիւններ է կրած յետամուտ յաւելումներով:

Պատմութիւն սրբոց Հռիփսիմեանց եւ Բառ: Այս աշխատութիւնը Խորենացին գրել է 615 թուականի Հռիփսիմեան տաճարի նորոգութեան առթիւ: Նա բովանդակում է ժամանակակից Կոմիտաս կաթողիկոսի «Անձինք նուիրեալք» շարականի շատ նմանութիւնները: Իրենց լեզ-

ուով՝ այդ երկու գրութեանը օտար չեն բռնաւ խորենեան ոճին:

Թուղք Սահակայ Արծրունայ եւ պատասխանի. Խորենացու վերջին գործերից է, ապագրութեան շատ անխոյժ ու խեղութիւններով լի: Այս Սահակ Արծրունին այն իշխանն է, որին է. դարում Սերէոսն է յիշատակում (էջ 124) եւ որի աբխասիքով վասակ որդին 613 թուին Պարսիկները ձեռքով սպանուեցաւ: Է. դարում սերտ մտերմութիւն կար Բագրատունեաց ու Արծրունեաց միջեւ. վարազ Շապան Արծրունին Սրմբատ Բագրատունու գլխաւոր գործակիցներից մէկն էր: Սահակ Արծրունին կարգաւոր Սահակ Բագրատունու մօտ, երեւի Դարեւնքում, Խորենացու Հայոց Պատմութիւնը, իր շնորհակալութիւնն է յայտնում եւ ցանկանում է ստուգապէս իմանալ Հոգեաց վանքի Տիրամօր պատկերի պատմութիւնը: Խորենացին՝ անծանօթ Սահակ Արծրունուն, իր խնդակցութիւնն է յայտնում այդ պահանջի առթիւ եւ միանգամայն ապագայի նախատեսութեամբ, որչափ մարդիկ բնականաբար դէպքերից կարող են ապագան կռահել, յայտնում է, թէ հայ ազգի ապագան երկու նախարարական տոհմերին՝ Բագրատունեաց եւ Արծրունեաց է պատկանում: Իր պատասխանի մէջ Խորենացին պարզօրէն այս էլ է յայտնում, թէ ինքը Սահակ ու Մեսրոպի աշակերտ եղած չէ, թող թէ եւ նրանց փոխանորդը. թէ նրանց կենցաղավարութիւնը յիշելիս՝ ցաւում է, որ իր կեանքով նրանց արժանաւոր չէ: Կարելի է սրանից աւելի պարզ խոստովանութիւն, թէ ինքը Պարթև Սահակի ու Մուշոցի ժամանակակից չէ. միմիայն նրա խօսքերի իմաստի անմիջականութիւնը նրա կեանքը Զ. դարից տանում կապում է Ե. դարի մէջ գործիչների կեանքի հետ:


16. Ինչպէս յայտնի է, 632 թուին Կարինի ժողովում մեր եկեղեցական կեանքի համար մի խոշոր երեւոյթ կատարուեցաւ, որ նոր երկպառակութեան պատճառ դարձաւ: Այդ ժողովում Եզրաս կաթողիկոսը իր համախոհներով միակամեայց վարդապետութիւնն ընդունեց, որ քաղկեդոնութեան ու միաբնակութեան խառնուրդ էր: Ինչպէս վերաբերուեցաւ այդ խնդրին Մովսէս Խորենացին: Մենք ունինք նրա վերջին գրութեանը — Յաղագս վարդապետին խորհրդոյ: Այստեղ հայ եկեղեցու մի բնութեան վարդապետութիւնը քարոզելուց յետոյ՝ հակառակ Եզրի ընդունած երկու բնութեան՝ նա առում է. «Ճանապարհորդեաց... միով դիմօք, միով կամաց շարժողութեամբ»: ուրեմն

Խորենացին Մաթուաղային ու Թէոդորոսին
հակառակ հայ եկեղեցու ամբողջ լրութեան հետ
անբաժան մնաց: Կարելոր է նոյնպէս դիտել,
որ Վարդավառի կամ Պայծառակերպութեան
տօնը եկեղեցու մէջ Զ. դարում հաստատուե-
ցաւ: Ճառի լեզուն Խորենացու Պիտոյից Գիրքն
է յիշեցնում:

632 թուից յետոյ Խորխոռունեաց Մովսէս
եպիսկոպոսը այլ եւս երկար չապրեցաւ: Նա
«լի եւ պարարտ ծերութեամբ» իր արդիւնա-
շատ կեանքը կնքեց 120 տարեկան հասակում
638 թուին:

Ա. ԶԱՄԻՆԵԱՆ
Մայիս 1931

Նոր Նախիջեւան



Իմ գիւղս

Նորէն Թախի՛ծն է գրկեր գիւղն աւերուն,
Ու հով մը խուլ կը կաղկանձէ դաշտին մէջ
Սուգն անպատում տերեւաբափ ծառերուն,
Եւ աշունն ալ կ'իյնայ առէջ առ առէջ:

Ու ես առջեւ գիւղանկարին այս տրտում
— Պատերազմի արեւախրքներն ողբերգող —
Կը տառապիմ արտասուելու անկարող:

Ո՛վ իմ գիւղակս հայրենի, ո՛րք, աւերած,
Այժմ աւա՛ղ լըճուած նոյն իսկ երազէդ,
Զորքած բաղեղ մ'ինչպէս ծառին պըլլըւած,
Կը յամառիս պահել պատրանք մ'անցեալէդ:

Պուն իմ սրտիս առկայծող ջահն ես սիրուն
Զոր կը սպառնան մարել հովե՛րը վաղուան.
Բայց ես, գի՛ւղ եմ, քեզ պիտի բնաւ չըմոռնամ...:

Ա. ՍԵՄԱ